2026, ՀՈՒՆՎԱՐ Ա, ԹԻՎ 1 (693)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Ամանորի առիթով

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Ամանորի խորախորհուրդ այս երեկո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հողում ենք ձեզ Հայրապետական Մեր սերն ու օրհնությունը և սրտագին շնորհավորանքներն ու բարեմաղթանքները: Տարեմուտի սեմին Բարձրյալից հայցում ենք խաղաղություն համայն աշխարհին, խաղաղություն մեր հայրենիքին, խաղաղություն խռովահույզ մեր ողջ ժողովրդին:

Անցնող տարին ազգիս համար լի էր տագնապալի իրադարձություններով՝ հասարակության մեջ տեղ գտած պառակտումներով, ատելության ու անհանդուրժողության դրսևորումներով: Ցավոք, նոր տարի մուտք ենք գործում նաև Հայոց Եկեղեցու և հոգևոր դասի թիրախավորման մտահոգիչ պայմաններում: Շարունակում են բանտերում ապօրինաբար արգելափակված մնալ եկեղեցականները, ազգային բարերարը և նվիրյալ հայորդիներ:

Տարեմուտը, սիրելիներ, հրավեր է նորոգվելու, վանելու մեր կյանքից մերժելի իրողությունները, սրբագրելու մեղսալի ու կործանարար ընթացքները, դադարեցնելու եղբայրադավության քայլերը, իսպառ բացառելու ատելությունն ու թշնամանքը, անհանդուրժողության և անօրինականության հանցավոր երևույթները: Մենք Աստծո ժողովուրդ ենք, իսկ «Աստված խռովության Աստվածը չէ, այլ՝ խաղաղության»,— հռչակում է Սուրբ Գիրքը (Ա Կորնթ. 14:33): Մեր կյանքում երկնապարգև խաղաղությունը, օրհնություններն ու շնորհները հաստատուն են մնում միմյանց նկատմամբ սիրո, ներողամտության և համերաշխության դրսևորմամբ:

Հիրավի, խաղաղության և սիրո մեջ է գործում Աստված, և իրական սերն ու ներքին խաղաղությունն են բարիք դառնում թե՛ անհատի և թե՛ ժողովրդի համար: Ազգը զորեղ է, և պետությունը՝ անսասան, երբ անխաթար են նվիրական արժեքները, ավանդույթներն ու նախնյաց ժառանգությունը, երբ որևէ պատրվակով չի ձևախեղվում պատմական հիշողությունը, կասկածի տակ դրվում մեր Սուրբ եկեղեցու բազմադարյա առաքելությունը: Այսօր ընդդեմ Եկեղեցու կատարվող պառակտիչ գործողությունները, որ արդարորեն առաջ են բերում մեր հավատավոր զավակների ընդվզումը հայրենիքում և սփյուռքում, չունեն որևէ արդարացում և չեն ունենա շահեկան արդյունք: Եկեղեցին չի պատկանում որևէ դարաշրջանի, որում ապրում է, այլ՝ միայն Քրիստոսին:

Առաքելահիմն Հայոց Եկեղեցին Քրիստոսահաստատ Սուրբ Էջմիածնով Երկնավորի շնորհն է մեր ժողովրդի՝ ազգանվեր, հայրենաշեն ու հայապահպան իր ծառայությամբ:

Տարեմուտի խորհրդաշատ այս պահին, սիրելիներ, Հայրապետիս հորդորն է՝ ամուր և աներեր պահենք մեր հավատը, դժվարություններին արիաբար դիմակայելու կամքն ու վճռականությունը: Թույլ չտանք, որ անցնող տարվա փորձությունները կարծրացնեն մեր սրտերը, հարմարվողականությունն ու անտարբերությունը լինեն մեր ուղեկիցը՝ տկարացնելով մեր հույսը և թուլացնելով մեր ազգային ոգին: Անվնաս նախանձախնդրությամբ գործենք՝ հանուն արցախահայության իրավունքների պաշտպանության և Բաքվում անմարդկային նվաստացումների ենթարկվող մեր հայրենակիցների ազատ արձակման: Սերն առ հայրենին, առ մեր ժողովուրդը և Մայր Եկեղեցին դարձնենք առանցքը մեր կյանքի, ներշնչող ուժը խիզախումների ու հանձնառությունների, իմաստավորումը ամեն զոհողության: Բարի և արժանապատիվ ընթացքով վերահաստատենք եղբայրսիրության, փոխադարձ հարգանքի, զորակցության մթնոլորտը մեր հայրենիքում, ազգային կյանքում և միջանձնային հարաբերություններում:

Դժվարին այս շրջանը, անտարակույս, պիտի հաղթահարենք մեր լույս հավատի, մեր միասնականության, հաստատակամության ու տոկունության շնորհիվ՝ ունկնդիր առաքելական պատգամին. «Միաբա՛ն եղեք, խաղաղությո՛ւն արեք, և խաղաղության ու սիրո Աստվածը թող լինի ձեզ հետ» (Բ Կորնթ. 13:11):

Աղոթենք Հայոց բանակի սպաների և զինվորների, նեղությունների ու կարիքի մեջ գտնվողների, գերեվարված ու անհայտ կորած և բանտերում արգելափակված մեր զավակների ու նրանց ընտանիքների համար: Առ Տերն ապավինությամբ թող մեր հայացքը դեպի ապագան համակված լինի լավատեսությամբ, որով 2026 թվականը կարող պիտի լինենք դարձնել նոր հնարավորությունների տարի՝ առավել ամրացնելու և զորացնելու մեր պետականությունը, ազգային ինքնությունն ու հոգևոր մեր կյանքը: Ըստ առաքյալի պատգամի՝ ընթանանք ինչպես լուսո որդիներ, քանզի լուսո պտուղներն են բարությունը, արդարությունը և ճշմարտությունը (հմմտ. Եփ. 5:8–9): Թող Աստծո սերն ու շնորհները միշտ սփռված լինեն հայրենական ու ազգային մեր անդաստանում և ամենքիս սրտերում:

Աստված օգնական և պահապան մեր հայրենիքին և աշխարհասփյուռ մեր ժողովրդին այսօր և միշտ և հավիտյան:

Շնորհավոր Նոր տարի:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առիթով

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Խավարի մեջ նստած ժողովուրդը մեծ լույս տեսավ. և լույս ծագեց նրանց վրա, որ նստում էին մահվան երկրի և ստվերների մեջ»

(Մատթ. 4.16):

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ,

Այսօր վերստին Սուրբ Ծննդյան հրեշտակաձայն ավետիսն է թևածում մեր եկեղեցիներում, մեր ընտանիքներում: Միասնաբար փառաբանում ենք մեր Տիրոջն ու Փրկչին, Որ ծնվեց և աշխարհ եկավ մեր փրկության համար:

«Խավարի մեջ նստած ժողովուրդը մեծ լույս տեսավ. և լույս ծագեց նրանց վրա, որ նստում էին մահվան երկրի և ստվերների մեջ»: Ավետարանիչը Աստվածորդու Ծնունդը համեմատում է լույսի ծագման հետ:

Արդարև, «խորհուրդ մեծ և սքանչելի»: Անժամանակ Աստված անցավոր աշխարհ եկավ: Անծայրածիր տիեզերքը ստեղծողը պարփակվեց մարդկային մարմնում, երկնային գահին բազմողը՝ փոքրիկ ու աղքատիկ քարայրում: Ազգերը հրավիրվեցին մեղքը թոթափելու, մահվան խավարից ելնելու և հավիտենության ժառանգորդ լինելու: «Աստված մարդացավ, որպեսզի մարդը աստվածանա»,— ուսուցանում են Եկեղեցու Սուրբ Հայրերը: Հիրավի, Աստծո մարդանալը սկիզբն էր մարդու մաքրագործվելու, սրբագործվելու ու աստվածանալու:

Սիրելիներ, Քրիստոսի ուղենշած այս ճանապարհից խոտորվելը աշխարհը դարձնում է անարդարության, թշվառության ու դժբախտությունների թատերաբեմ, ընկղմում մոլորությունների խավարի մեջ, հանգեցնում անձնական ու հասարակական կյանքի խեղման, արժեքների աղավաղման ու ոչնչացման, որոնց դրսևորումները տեսնում ենք նաև մեր իրականության մեջ: Այսօր մեր կյանքում տկարանում են միմյանց հանդեպ հավատն ու վստահությունը, որպես քաջություն է ընկալվում անհարգալից ու անզուսպ պահվածքը, խոսքի ազատությունը հակադարձվում է այլակարծության անհանդուրժողությամբ, բանավեճը՝ վերածվում վիրավորանքների ու վարկաբեկումների, իսկ հանրային օգուտը, հայրենանպաստ և ազգանվեր ծառայությունը ստորադասվում անձնական և խմբակային նեղ շահերի: Մեր Սուրբ Եկեղեցին շարունակում է ենթարկվել բռնաճնշումների: Այս իրավիճակը լուրջ հարված է մեր ազգի ու պետության հեղինակությանը և խոր վերք՝ հասցված համայնքներին ու հավատացյալներին: Հակառակ անօրինական ու կանոնախախտ գործողությունների՝ մեր Սուրբ Եկեղեցին իր բարեպաշտ ժողովրդով ամուր ու անսասան է, հավատարիմ իր տերունաշնորհ կոչմանն ու առաքելությանը: Հայոց Եկեղեցին սուրբ է ու սրբարար՝ հիմնադրված մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությամբ՝ որպես «մարդկանց քավարան, հրեշտակաց բնակարան և տուն Աստծո»: Առաքելական մեր Մայր Եկեղեցին պատմության հոլովույթներում ենթարկվել է բազում հարձակումների, անցել սոսկալի նեղությունների ու տառապանքների միջով, մարտիրոսվել ու նահատակվել, բայց երբեք հուսահատության գերի չի դարձել, քանզի գիտակցել է, որ ճշմարիտ ազատությունը և փրկությունը Քրիստոսին հնազանդվելու, Նրան ապավինելու մեջ է: Քրիստոսով կյանքը լցվում է սիրով ու ողորմությամբ, ազնվությամբ ու արդարությամբ: Քրիստոս Ճանապարհն է խավարից դեպի լույս, մեղքից դեպի սրբություն: Տերը միշտ հավատարիմ է՝ փրկելու խոտորումներից ու անկումներից մեղսակորույս մարդուն, քանզի ինչպես հռչակում է Եզեկիել մարգարեն, Աստված չի տենչում մեղավորի մահը, այլ նրա դառնալը չար ճանապարհից և ապրելը (18.23): Քրիստոսով մեր առջև բացվում է վերհառնումի, հավատով նորոգության ուղին: Ըստ առաքյալների խոսքի՝ Փրկիչը մեր կենդանի Վեմն է, որ կարող է մեզ հաստատուն պահել (հմմտ. Ա Պետ. 2.4, Հռ. 14.24) խռովահույզ աշխարհի ալեկոծություններում: Աստվածորդու փրկարար զորությամբ է, որ նահանջում են հեծություն, մահ ու կործանում, և Փրկչի Սուրբ Ծննդյամբ լույս է ծագում նրանց վրա, որ նստում են մահվան երկրի և ստվերների մեջ:

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ, Սուրբ Ծննդյան հրեշտակաձայն ավետիսը և բեթղեհեմյան աստղի լույսը այսօր էլ բոլոր մարդկանց ուղղված հրավեր են՝ Աստծուն ապավինությամբ կյանքը վերափոխելու բարիով ու բարիքով, հաստատելու խաղաղություն աշխարհում և հաճություն մարդկանց մեջ: Երկնառաք այս պատգամին ունկնդիր՝ ապրենք ու գործենք Տիրոջ հետ՝ բոլոր բնագավառներում մեր նախանձախնդիր ու ամբողջանվեր ծառայությամբ, ի խնդիր անձնական, ընտանեկան ու հայրենական կյանքի ապահով ու բարօր ընթացքի: ➥ էջ 2

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առիթով

↩ էջ 1

Վճռական լինենք՝ հաստատուն պահելու օրինահարգությունը, մերժելու անիրավությունն ու կամայականությունը, ատելությունն ու քինախնդրությունը, որոնք մեծապես վնասում ու քայքայում են պետական ու ազգային մեր ներուժը: Մեր առջև բացված է ճանապարհը դեպի Տերը, դեպի երկնառաք պարգևներ ու հավիտենություն: Այդ ուղիով, տերունական պատգամների իրագործումով է, որ մեր ժողովուրդը կհաղթահարի տառապանքների խավարը, և ավետարանչի խոսքի համաձայն՝ լույս կծագի մեր կյանքում, մեր նեղությունների ու դժբախտությունների հաղթահարման ճանապարհին: Արդ, պարզասիրտ հովիվների ու իմաստուն մոգերի պես անվարան երկրպագենք նորամանուկ Հիսուսին և մեր սրտերը բացենք՝ մարդեղացյալ Աստվածորդուն ընդունելու համար: Նախանձախնդիր լինենք Փրկչի պարգևած շնորհներով վերափոխվելու, որպեսզի ինչպես Քրիստոս ծնվեց և դարձավ մարդու Որդի, այդպես էլ մենք ճշմարիտ ընթացքով լինենք Աստծո որդիներ՝ ըստ առաքյալի խոսքի. «Երբ ժամանակը իր լրումին հասավ, Աստված ուղարկեց Իր Որդուն…., որպեսզի մենք որդեգրություն ընդունենք» (Գաղ. 4.4–5): Հավատարիմ մնանք Աստծուց մեզ ընծայված այս մեծագույն շնորհին և աստվածահաճո նորանոր իրագործումներով կերտենք մեր անվտանգ ու ապահով ներկան և սերունդների լուսավոր գալիքը:

Սուրբ Ծննդյան բերկրալի ավետիսով Մեր ողջույնն ենք հղում մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանին: Ի Քրիստոս սիրով ողջունում ենք քույր Եկեղեցիների Պետերին՝ հայցելով մարդեղացյալ Փրկչի զորակցությունը իրենց աստվածապատվեր առաքելության մեջ: Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու ողջ հոգևոր դասին և համայն հավատավոր մեր ժողովրդին ի հայրենիս և ի սփյուռս:

Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության հուսառատ այս օրը աղոթք բարձրացնենք առ Փրկիչ մեր Տերը՝ խնդրանքով, որ խաղաղությունը թևածի ողջ աշխարհում, հայրենի մեր եզերքներում, և ապահովության ու շենության մեջ հզորանա մեր պետությունը, բարօրության մեջ հարատևի մեր ժողովուրդը: Հայց վերառաքենք հայրենազրկված արցախահայ Մեր զավակների տոկունության ու ոգու ամրության և նրանց ոտնահարված իրավունքների վերականգման համար: Աղոթենք հայրենյաց պաշտպան զինվորականների, հայրենիքի համար զոհված մեր քաջորդիների հոգիների հանգստության և նրանց ծնողների ու հարազատների մխիթարության համար: Աղոթենք ապօրինաբար ազատազրկված հոգևորականների, ազգային բարերարի ու նվիրյալ հայորդիների, այլև գերության մեջ գտնվող և անհայտ կորած մեր զավակների համար: Թող Բարձրյալի Սուրբ Աջի պահպանության ներքո մեր կյանքը լուսավորյալ մնա աստվածային ներկայությամբ, զարդարվի հավատավոր բարի գործերով, և մենք գոհությամբ փառաբանենք մարդեղացյալ Փրկիչ մեր Տիրոջը այսօր և միշտ և հավիտյանս. ամեն:

Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ,
Ձեզ և մեզ մեծ աւետիս:

Հայրապետական Սուրբ Պատարագ Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առիթով

Հունվարի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեծ հանդիսավորությամբ նշվեց մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնը: Տոնի առիթով Միածնաէջ Մայր Տաճարում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը մատուցեց Սուրբ և Անմահ Պատարագ:

Հայրապետական Սուրբ Պատարագին ներկա էին Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, քաղաքական-հասարակական գործիչներ և ուխտավոր հայորդիներ:

Հայրապետական խաչվառազարդ թափորը զանգերի ավետաբեր ղողանջների ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսին Վեհարանից ամպհովանիով ուղեկցեց դեպի Մայր Տաճար:

Հայրապետական ամպհովանին կրում էին Արագածոտնի թեմի թեմական խորհրդի ատենապետ Գրիգոր Մովսիսյանը, գեղանկարիչներ Տիգրան Բարխանաջյանը, Միքայել Հարությունյանը և Մայիս Մխիթարյանը:

Սրբազան արարողությանը Հայոց Հովվապետին որպես առընթերականեր սպասավորում էին Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը և Գերաշնորհ Տ. Դանիել եպիսկոպոս Ֆընտըգյանը:



Սուրբ Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը աշխարհասփյուռ հավատավոր հայ ժողովրդին հղեց հայրապետական իր պատգամը՝ փոխանցելով «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» կենարար ավետիսը:

Հավարտ Սուրբ Պատարագի՝ կատարվեց Ջրօրհնեքի արարողությունը: Սուրբգրային ընթերցումներից, ջրօրհնյաց շարականների երգեցողությունից և Բարսեղ Մեծ հայրապետի աղոթքից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը խաչով և Սրբալույս Մյուռոնով օրհնեց ջուրը: Խաչի այս տարվա կնքահայրն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերար տիար Նվեր Մխիթարյանը:

Ջրօրհնեքի արարողության վերջում Վեհափառ Հայրապետը վերստին իր օրհնությունն ու Սուրբ Ծննդյան փրկարար ավետիսը փոխանցեց ներկա հավատավոր ժողովրդին:

Սուրբ Ծննդյան Ճրագալույցի Պատարագը Միածնաէջ Մայր Տաճարում

Հունվարի 5-ին մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առիթով, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Ճրագալույցի Սուրբ Պատարագ, որին մասնակցում էին Մայր Աթոռի միաբանները և ուխտավոր հայորդիներ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանը:

Մինչ Սուրբ Պատարագը կատարվեց Երեկոյան ժամերգություն, այնուհետև ընթերցվեցին սուրբգրային տարբեր հատվածներ, որից հետո Մայր Աթոռի չորս միաբան սարկավագներ ընթերցեցին Դանիելի մարգարեությունը: Սուրբ Պատարագի ընթացքում Հայկազուն Սրբազանը, իր քարոզում ներկայացնելով Տիրոջ Սուրբ Ծննդյան խորհուրդը, ի մասնավորի նշեց. «Քրիստոնեությունը, ամեն բանից առաջ, անձնական հավատքի, հոգևոր զգացումի դրսևորում է: Նախ մենք՝ որպես անհատներ, պետք է դարձի գանք, Աստծուն գտնենք մեր սրտում, դառնանք լույսի որդիներ, լուսավորենք մեր հոգիները, ապա նոր՝ փորձենք մեր օրինակով քարոզել ուրիշներին: Առանց այս ամենի՝ չի կարող որևէ ժողովուրդ փրկության առաջնորդվել»:

Այնուհետև պատարագիչ Սրբազանը հորդորեց հավատացյալ ժողովրդին՝ իբրև քրիստոնյաներ հիշել աղքատներին ու կարիքավորներին, այցելել հիվանդներին, բանտարկյալներին ու աղոթել նրանց համար:

«Սուրբ Ծնունդը մեզ համար հոգեպես վերափոխվելու, հոգևոր ուրախություն ապրելու և մեր ուխտն առ Աստված նորոգելու գեղեցիկ առիթ է, որպեսզի զորանանք Քրիստոսով, վերահաստատենք Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ճշմարիտ զավակները լինելու մեր կոչումը: Ձգտենք նմանվել մեր սուրբ հայրերին, հավատարիմ մնանք մեր սրբազան ավանդույթներին, պատրաստ լինենք՝ իբրև քրիստոնյաներ, դիմակայելու ամեն տեսակի դժվարությունների և զորացնելու մեր հավատքը»,— եզրափակեց Հայկազուն եպիսկոպոսը:

Սուրբ Պատարագի ավարտին՝ նախատոնակի արարողության ընթացքում, Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրացավ Ավագ Սուրբ Խորան և Սուրբ Սեղանի կանթեղից վառեց Հիսուս Քրիստոսին խորհրդանշող մոմը, որից կենսատու լույսը բաշխվեց հավատացյալներին:

Այնուհետև Մայր Աթոռի միաբանությունը մեկտեղվեց Վեհարանում, ուր, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց տարվա առաջին Տնօրհնեքը:

Գերագույն հոգևոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ հունվարի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ժողով: Նիստը վարեց Վանական խորհրդի ատենապետ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով, որից հետո Գերագույն հոգևոր խորհրդի անդամներին իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ժողովի օրակարգում ընդգրկված էին Եկեղեցու վարչական, կանոնական, կարգապահական խնդիրներին առնչվող հարցեր: Եկեղեցի–պետություն հարաբերությունների և ստեղծված իրավիճակի մասին զեկույցով հանդես եկավ ի. գ. դ. տիար Գևորգ Դանիելյանը:

Ընդգծվեց, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն հուզող խնդիրները քննվում են եկեղեցական սահմանված կարգով համապատասխան կառույցներում, և առաջադրվում՝ համարժեք լուծումներ: Նշվեց, որ շրջանառվող «ներեկեղեցական հակադրությունների» թեզն արհեստածին է և նպատակ ունի օրինականացնելու իշխանությունների ապօրինի միջամտությունը Եկեղեցու ներքին գործերին: Արձանագրվեց նաև, որ 2025 թ. մայիսի վերջից իշխանության նախաձեռնած հակաեկեղեցական արշավն ստացել է համակարգված բնույթ՝ ուղեկցվելով հակասահմանադրական գործողություններով, քրեական հետապնդումներով և հոգևորականների նկատմամբ բռնաճնշումներով:

Գերագույն հոգևոր խորհուրդն իր գնահատանքը հղեց Հայ Եկեղեցուն իրենց աջակցությունը ցուցաբերած հավատավոր ժողովրդին, ինչպես նաև կառույցներին և առանձին անհատներին, որոնք օրինական քայլերով իրենց վճռական դիրքորոշումն են արտահայտում՝ ի պաշտպանություն Եկեղեցու իրավունքների: Քաղաքականության մեջ Եկեղեցու ներգրավված լինելու մեղադրանքն անհիմն և անընդունելի համարելով՝ ԳՀԽ-ն մերժելի նկատեց իշխող ուժի կողմից արհեստական օրակարգերի ձևավորմամբ Հայ Եկեղեցին քաղաքական գործընթացների մեջ ներքաշելու փորձերը, ինչը նոր բաժանումներ ու հակառակություններ է առաջ բերում ազգային կյանքում:

ԳՀԽ-ն նաև իր մտահոգությունն արտահայտեց տասը եպիսկոպոսների որդեգրած պառակտիչ կեցվածքի, հանրային ելույթներում Մայր Աթոռի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հասցեին հնչեցրած զրպարտիչ հայտարարությունների և մեղադրանքների առնչությամբ: Ժողովականները խստորեն դատապարտեցին եպիսկոպոսների միանալը վարչապետի կողմից նախաձեռնված և անթաքույց հովանավորվող «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բարեռորոգման ծրագրին», ինչպես նաև ՏԻՄ ղեկավարների, իրավապահ և ուժային կառույցների ներգրավմամբ թեմական առաջնորդների կողմից եկեղեցականների նկատմամբ գործադրվող ապօրինի ճնշումներն ու սպառնալիքները:

Գերագույն հոգևոր խորհուրդը հորդորեց հոգևորականներին չտրվել հակաօրինական պարտադրանքներին և, հավատարիմ մնալով իրենց կոչմանը, առաջնորդվել բացառապես Հայոց Եկեղեցու կանոնական կարգով:

Քննարկելով առկա իրադրության հաղթահարման ուղիները՝ որոշվեց նախորդ տարեվերջին հրավիրված և ժամանակավորապես հետաձգված եպիսկոպոսաց ժողովը և աղոթական առանձնացումը կազմակերպել փետրվար ամսվա ընթացքում:

Ժողովը փակվեց «Պահպանիչ» աղոթքով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց Մայր Աթոռի պաշտոնեությանը

Հունվարի 9-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առիթով հանդիպում ունեցավ Մայր Աթոռի տարբեր կառույցներում պաշտոնավարող աշխարհական աշխատակիցների հետ:

Տերունական աղոթքից հետո Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը ներկաների անունից շնորհավորեց Նորին Սրբությանը Ամանորի

և Սուրբ Ծննդյան տոների առիթով և Հայոց Հայրապետին փոխանցեց ամենքի ջերմ բարեմաղթանքները:

Պաշտոնեության անունից Վեհափառ Հայրապետին շնորհավորական խոսք ուղղեց նաև Մայր Աթոռի Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնից Մանուշակ Գևորգյանը:

Այնուհետև ներկաներին իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Շնորհավորելով Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առիթով՝ Հայոց Հայրապետը բարձրորեն գնահատեց Մայր Աթոռի պաշտոնեության նախանձախնդիր ծառայությունն ու նվիրումը՝ ի խնդիր Սուրբ Էջմիածնի առաքելության առավել արդյունավորման ու զորացման: Նորին Սրբությունը հաստատեց, որ Մայր Աթոռի կողմից արձանագրված ձեռքբերումների մեջ իրենց կարևոր ներդրումն ունեն նաև աշխարհիկ պաշտոնյաները:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռի աշխատակիցներին մաղթեց Աստծո օրհնությունն ու զորակցությունը՝ հայցելով, որ Տիրոջ Սուրբ Աջը հովանի լինի հայորդիներին և նրանց ընտանիքներին՝ խաղաղության ու բարօրության մեջ պահելով հայրենի մեր երկիրը:

Հայրապետական տնօրինություն

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հունվար 10, 2026 թվակիր Հայրապետական տնօրինությամբ Մասյացոտնի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Գևորգ եպիսկոպոս Սարոյանը ազատվել է թեմական առաջնորդի պաշտոնից: Տնօրինության համար հիմք են ծառայել առաջնորդի հանգամանքը չարաշահելու, պարտականությունների մեջ թերանալու, թեմի եկեղեցականաց նկատմամբ հարկադրանք ու ճնշումներ գործադրելու պարագաները: Հայրապետական տնօրինությամբ Մասյացոտնի թեմի առաջնորդական տեղապահ է նշանակվել Հոգեշնորհ Տ. Ռուբեն վարդապետ Զարգարյանը:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Տեղի ունեցավ «Հայոց Սուրբ Ծնունդ» խորագրով հոգևոր-դասական համերգը

Հունվարի 6-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ Երևանի «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի ունեցավ «Հայոց Սուրբ Ծնունդ» խորագրով հոգևոր-դասական համերգը: Արդեն հինգերորդ տարին բարձր մակարդակով կայացող երաժշտական այս նախագիծը նշանավորվել է որպես ազգային-համաքրիստոնեական կարևոր իրադարձություն ժամանակակից հայ հոգևոր-մշակութային կյանքում:

Միջոցառմանը հայ և համաշխարհային երաժշտական ստեղծագործություններով հանդես եկան Գյումրու պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Ասատրյանի ղեկավարությամբ, Հովհաննես Չեքիջյանի անվան Հայաստանի ազգային ակադեմիական նվագախումբը, հայ և ռուս մենակատարներ:



Համերգի ընթացքում ողջույնի խոսքով հանդես եկավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Թանգարանների և Արխիվի տնօրեն Ասողիկ աբեղա Կարապետյանը: Իր խոսքում Հայր Սուրբը բարձր գնահատեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանու ներքո իրականացվող սուրբծննդյան երաժշտական այս նախագիծը, վերարժևորեց օրվա խորհուրդը՝ մասնավորապես նշելով. «Քրիստոս ծնավ և հայտնեցավ» աշխարհասասան ավետիսը, որն այսօր առավոտյան հնչել էր մեր սուրբ եկեղեցիներում, հնչեց նաև երաժշտության այս գեղեցկակերտ տաճարում, որտեղ մենք ամենքս ի մի ենք եկել մեր Տեր Հիսուս Քրիստոսի անվամբ՝ երգահանդեսով փառավորելու Նորամանուկ Աստվածորդուն և ապրելու հոգևոր բերկրանքի սուրբ պահեր:

Սուրբ Ծնունդը քրիստոնեական մեր հավատքի ամենախոր և լուսավոր խորհուրդներից է՝ Աստծո մարդեղության, անսահման սիրո և փրկության ավետիսը համայն մարդկության համար: Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդը լույս է, որ ծնվում է խավարի մեջ, հույս է բոլոր փորձությունների ժամանակ և խաղաղության ու փրկության խոստում՝ առ Աստված հուսացյալ յուրաքանչյուր հոգու համար:

Սուրբ Ծննդյան այս լույս տոնը մեզ կոչ է անում կանգ առնել առօրյա հուզումների մեջ, վերարժևորել մեր կյանքի ուղին և վերադառնալ հավիտենական անանց արժեքներին՝ հավատքին, ճշմարտությանը, արդարությանը, սիրուն և խաղաղությանը:

Մեծ և սքանչելի այդ իրադարձությունը՝ Քրիստոսի Սուրբ Ծնունդը, դարեր շարունակ եղել է ոչ միայն հավատքի, այլև մշակույթի, արվեստի և հատկապես երաժշտական արվեստի անսպառ ներշնչման աղբյուր:

Այս երեկո մենք հավաքվել ենք՝ այդ մեծ ավետիսը վերապրելու հոգևոր-ակադեմիական երաժշտության միջոցով:

Արդարև, երաժշտությունն ունի եզակի կարողություն՝ արտահայտելու այն, ինչ խոսքը շատ հաճախ չի կարող ամբողջությամբ փոխանցել: Հոգևոր ստեղծագործություններում երաժշտությունը դառնում է աղոթք, իսկ դասականում՝ խորին խորհրդածություն, իրականում երկուսն էլ՝ հոգևորն ու դասականը, աղոթք են, որով մարդ էակը հոգեմտավոր բարձրացում, վերացում է ապրում առ Լույսը, դեպի Արարիչն Աստված:

Հոգևոր-դասական երաժշտությունը մի հրաշակերտ կամուրջ է մարդու և հավիտենականի միջև, հնարավորություն՝ ընկղմվելու լռության ու անդորրի մեջ, խորհելու, աղոթելու և այդպես հոգևոր վերածնունդ ապրելու....»:

Վերջում Հայր Սուրբն առանձնահատուկ շնորհակալություն հայտնեց համերգի բոլոր հովանավորներին ու աջակիցներին՝ իր խոսքն ամփոփելով մաղթանքով. «Մեր փափագն է և մաղթանքը, որ Սուրբ Ծննդյան հանդիսավոր համերգը դառնա լույսի, հույսի, սիրո, խաղաղության, խոկման և հոգևոր նորոգման պահ մեզանից յուրաքանչյուրի համար: Թող Մանուկ Հիսուսի աստվածային լույսն ու խաղաղությունը հար թևածեն մեր ներաշխարհում, մեր ընտանեկան հարկերում, մեր ազգային կյանքում, մեր սիրելի մայր հայրենիքում՝ ամրապնդելով հավատքը, առատացնելով սերը և առաջնորդելով մեզ ամենքիս դեպի համերաշխություն, նվիրում ու հավատարմություն և կեցուցիչ միություն»:

Պատմա-աստվածաբանական ակնարկ Հիսուսի ծննդյան վերաբերյալ

Հիսուս Քրիստոսի ծննդյան պատմությունը հիշատակված է Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններում: Երկու պատմություններն էլ համընկնում են իրար, համաձայն որոնց՝ Հիսուսը ծնվել է Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում: Նրա մայրը՝ Մարիամը, նշանված էր Հովսեփ անունով մի մարդու հետ, որը սերում էր Դավիթ թագավորի տոհմից և Հիսուսի կենսաբանական հայրը չէր, քանի որ Հիսուսի ծնունդը տեղի է ունեցել աստվածային միջամտությամբ՝ Սուրբ Հոգու ներշնչմամբ: Ժամանակակից գիտնականների մեծամասնությունը չի սևեռվում միայն երկու կանոնիկ ավետարանական ծննդյան պատմությունների վրա, քանի որ դրանց մեջ առկա տոհմաբանությունները տարբերվում են իրարից: Որոշ ուսումնասիրողներ պատմականության հարցը համարում են երկրորդական, քանի որ Ավետարանները հիմնականում գրվել են որպես աստվածաբանական գրվածքներ, այլ ոչ թե պատմական ժամանակագրություններ:

Սուրբ Ծնունդի գեղարվեստական պատկերումը քրիստոնյա նկարիչների համար կարևոր թեմա է եղել 4-րդ դարից ի վեր: 13-րդ դարից ծննդյան տեսարանի գեղարվեստական պատկերումներն ընդգծել են Հիսուսի խոնարհությունը և խթանել Նրա նուրբ կերպարի կերտումը, որը մեծ փոփոխություն է վաղ շրջանում ընդունված «Տեր և Վարպետ» կերպարի համեմատ՝ արտացոլելով նույն դարաշրջանում քրիստոնեական հովվական ծառայության կողմից ընդունված ընդհանուր մոտեցումների փոփոխությունները:

Մատթեոսը և Ղուկասը միակարծիք են, որ Հիսուսը ծնվել է Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում՝ Հերովդես Մեծի գահակալության ժամանակ: Ղուկասի Ավետարանում Նորածինը դրվում է մսուրի մեջ, «քանի որ կատալիմայում տեղ չկար»: Կատալիման (κατάλυμα, հին հունարեն բառ է, որը բառացի նշանակում է կեցավայր, օթևան, հանգրվան) կարող է նշանակել մասնավոր տուն (սա քիչ աջակցություն ունի գիտնականների շրջանում), սենյակ մասնավոր տանը կամ հյուրանոց:

2-րդ դարում Հուստինոս Վկան նշել է, որ Հիսուսը ծնվել է Բեթղեհեմից դուրս գտնվող քարանձավում, մինչդեռ Հակոբոսի նախաավետարանում նկարագրվում է հայտնի ծնունդը մոտակա քարանձավում: Բեթղեհեմի ներսում գտնվող Ծննդյան եկեղեցին, որ կառուցվել է Սուրբ Հելենեի կողմից, քարանձավ-մսուրի տեղն է, որն ավանդաբար համարվում է Հիսուսի ծննդավայր (հնարավոր է՝ սկզբում եղել է Թամուզ աստծո պաշտամունքի վայր): Իր «Ընդդեմ Կելսոսի» (1.51) աշխատության մեջ Որիգենեսը, որը ճանապարհորդել է Պաղեստինով մեկ՝ սկսած մոտ 215 թվականից, գրել է Հիսուսի մսուրի մասին:

Հիսուս Նազովրեցու ծննդյան թիվը նշված չէ ո՛չ Ավետարաններում, ո՛չ էլ որևէ աշխարհիկ բնագրում, սակայն Հերովդեսի մահվան տարեթվի վրա հիմնվելով՝ այն տեղադրվում է Ք. ա. 6–4 թվականների միջև: Պատմական ապացույցները չափազանց երկիմաստ են՝ վերջնական թվականը որոշելու համար, սակայն ամսաթվերը գնահատվել են Ծննդյան մասին պատմություններում նշված հայտնի պատմական իրադարձությունների հիման վրա՝ Հիսուսի ծառայության ենթադրյալ սկզբից հետադարձ հայացք գցելով կամ նշված ենթադրյալ աստղագուշակական նշանները կապելով իրական պատմական-աստղագիտական համընկնումների և երևույթների հետ:

Ամերիկացի աստվածաբան Հելմուտ Քյոսթերը գրում է, որ մինչդեռ Մատթեոսի պատմությունը ձևավորվել է հրեական միջավայրում, Ղուկասի պատմությունը նպատակամիտված է եղել հունա-հռոմեական աշխարհին: Մասնավորապես, Հիսուսի ժամանակներում հովիվները բացասաբար էին ընկալվում հրեաների կողմից, մինչդեռ հունահռոմեական մշակույթում նրանք համարվում էին «ոսկե դարաշրջանի խորհրդանիշներ, երբ աստվածներն ու մարդիկ ապրում էին խաղաղության մեջ, իսկ բնությունը՝ ներդաշնակության»: Որոշ մեկնիչներ գրում են, որ Ղուկասի Ավետարանում ներկայացված Հիսուսի և Հովհաննեսի ծննդյան պատմությունները մոդելավորված են Ծննդոց գրքի 27–43 գլուխների հատվածների հիման վրա: Անկախ դրանից՝ Ղուկասի Ավետարանում Հիսուսը պատկերվում է որպես բոլոր մարդկանց Փրկիչ՝ հետևելով տոհմաբանությանը մինչև Ադամ՝ ցույց տալով Նրա մարդկայնությունը, ինչպես նաև ծննդյան համեստ հանգամանքները: Ղուկասը, գրելով հեթանոս լսարանի համար, մանուկ Հիսուսին պատկերում է որպես հեթանոսների, ինչպես նաև հրեաների Փրկչի: Մատթեոսը մեջբերումներ է օգտագործում հրեական սուրբ գրություններից, ներկայացնում Մովսեսի կյանքը հիշեցնող տեսարաններ և տոհմաբանության թվային օրինաչափություն՝ Հիսուսին նույնականացնելով որպես Դավթի, Աբրահամի և Աստծո որդի: Ղուկասի Ավետարանի նախաբանը շատ ավելի երկար է. շեշտը դրված է Սուրբ Հոգու դարաշրջանի և բոլոր մարդկանց՝ թե՛ հրեաների, թե՛ հեթանոսների համար Փրկչի գալստյան վրա:

Մատթեոսի Ավետարանում Հիսուս ներկայացվում է որպես նոր Մովսես, մինչդեռ Ուլրիխ Լուզը Մատթեոսի պատկերած Հիսուսին դիտարկում է միաժամանակ և՛ որպես նոր Մովսեսի, և՛ Մովսեսին հակառակ կերպարի: Լուզը նաև նշում է, որ մանուկների կոտորածի պատմության մեջ կրկին տրվում է մարգարեության կատարման մեջբերում. Ռաքելը՝ Իսրայելի նախնիների մայրը, լաց է լինում իր մահացած երեխաների համար (Մատթ. 2:18):

Մատթեոսին որպես երկրորդ Մովսեսի դերում Հիսուսին ներկայացնող ավետարանիչ բացահայտող գիտնականները պնդում են, որ ինչպես Մովսեսը, մանուկ Հիսուսը ևս փրկվում է մարդասպան բռնակալից և փախչում Իր ծննդավայրից՝ մինչև Իրեն հալածողի մահը, որից հետո անվտանգ վերադառնում է՝ որպես Իր ժողովրդի Փրկիչ: Այս տեսանկյունից Մատթեոսի Ավետարանի պատմությունը հիմնված է Մովսեսի ծննդյան վերաբերյալ ավանդազրույցներում տարածված ավելի վաղ ավանդության վրա: Մովսեսի ծննդյան մասին փարավոնին հայտնում են մոգերը՝ նախազգուշացնելով, որ ծնվելու է մի երեխա, որը վտանգ է ներկայացնելու նրա իշխանության համար: Այդ պատճառով նորածին Մովսեսին մահ է սպառնում, սակայն նա հրաշքով փրկվում է: Վախեցած չար թագավորը, ցանկանալով վերացնել հնարավոր վտանգը, հրաման է տալիս սպանել իսրայելցի բոլոր արու երեխաներին:

Վարդգես Սուրենյանց. «Աստվածամայրը մանկան հետ», 1900 թ., Ս. Էջմիածին

Ըստ Ուլրիխ Լուզի՝ Մատթեոսի պատմության սկիզբը նման է աստվածաշնչյան ավելի վաղ պատմություններին, օրինակ՝ Հիսուսի ծննդյան ավետումը (Մատթ. 1:18–25) հիշեցնում է Իսմայելի (Ծնն. 16:11, Ծնն. 17), Իսահակի (Ծնն. 21:1), Սամսոնի (Դատ. 13:3, 13:5) ծննդաբերությունների մասին աստվածաշնչյան պատմությունները, ինչպես նաև՝ Մովսեսի ծննդյան մասին հագադական ավանդությունները: Սակայն Լուզի կարծիքով՝ ուրվագծերը տարօրինակ կերպով մասամբ համընկնում և հակադրվում են. «Եգիպտոսը, որը նախկինում ճնշման երկիր էր, դառնում է ապաստանի վայր, և Իսրայելի թագավորն է, որ այժմ ստանձնում է փարավոնի դերը: Սակայն Մատթեոսը պարզապես չի վերապատմում Մովսեսի պատմությունը: Փոխարենը՝ Հիսուսի պատմությունն իսկապես նոր պատմություն է. Հիսուսը միաժամանակ նոր Մովսեսն է և Մովսեսի հակոտնյան»:

Մատթեոս 1:22-ի («Այս ամենը եղավ, որպեսզի իրականանար Տիրոջ կողմից մարգարեի միջոցով ասվածը») և 2:23-ի («Եվ եկավ բնակվելու Նազարեթ կոչվող քաղաքում, որպեսզի իրականանար մարգարեների միջոցով ասվածը, թե Նազովրեցի է կոչվելու»)՝ Հին Կտակարանի որոշ հատվածներին վերաբերելու առնչությամբ նույնպես եղել են բազմաթիվ գիտական քննարկումներ: 4-րդ դարի փաստաթղթերը, ինչպիսին է Սինայական ձեռագիրը, չեն հիշատակում Եսայի մարգարեին Մատթեոս 1:22-ի հայտարարության մեջ. «Այս ամենը պատահեց, որպեսզի կատարվի այն, ինչ Տերը ասել էր մարգարեի միջոցով», սակայն Մատթեոսի որոշ օրինակներում, ինչպիսին Բեզայի ձեռագիրն է, նշված է Եսայի մարգարեն: Մատթեոս 1:23-ի՝ «Ահա կույսը կհղիանա» հայտարարության մեջ օգտագործվում է հունարեն parthenos («կույս») հասկացությունը, ինչպես «Յոթանասնից»-ում՝ Եսայու մարգարեության մեջ, մինչդեռ Եսայի 7:14-ում օգտագործվում է եբրայերեն «ալմա» բառը, որը կարող է նշանակել «աղջիկ», «երիտասարդ կին» կամ «կույս»: «Ալմա» բառը ծագում է մի արմատից, որը նշանակում է «լի եռանդով, սեռական հասունության հասած»: Ռայմոնդ Է. Բրաունը նշում է, որ Ք. ա. 3-րդ դարի՝ «Յոթանասնից»-ի թարգմանիչները հնարավոր է՝ հասկացել են, որ եբրայերեն «ալմա» բառը «կույս» է նշանակում այս համատեքստում:

Մատթեոս 2:23-ում նշված «Նազովրեցի է կոչվելու» արտահայտությունը չի հիշատակվում Հին Կտակարանի որևէ որոշակի հատվածում, և կան բազմաթիվ գիտական մեկնաբանություններ, թե ինչի մասին այն կարող է լինել: Բարբարա Ալանդը և այլ գիտնականներ «Նազովրեցի» իմաստով օգտագործվող հունարեն Ναζωραίος բառը համարում են անորոշ, սակայն Մ. Ջ. Մենկենը նշում է, որ դա դեմոնիմ է (դեմոնիմներն օգտագործվում են որոշակի վայրի բոլոր մարդկանց (ընդհանուր բնակչությունը) նշանագրելու համար՝ անկախ այդ վայրի բնակչության շրջանում առկա էթնիկ, լեզվական, կրոնական կամ մշակութային այլ տարբերություններից), որը նշանակում է «Նազարեթի բնակիչ»: Մենկենը նաև նշում է, որ այն կարող է վերաբերել Դատավորներ 13:5 և 13:7 համարներին: Գարի Սմիթը նշում է, որ «նազովրեցի» կարող է նշանակել Աստծուն նվիրված մեկը, այսինքն՝ ճգնավոր, կամ կարող է վերաբերել Եսայի 11:1-ին («Մի շառավիղ դուրս կգա Հեսսեի բնից, մի ընձյուղ կբուսնի նրա արմատներից»): Եսայի 4:3-ում «նազիրիտ»՝ «Աստծո Սուրբը» բառի օգտագործումը կարող է բառախաղ լինել՝ նպատակ ունենալով Հիսուսին նույնացնելու նազովրեցիների՝ հրեական աղանդի հետ, որը տարբերվում էր փարիսեցիներից միայն նրանով, որ նրանք Հիսուսին համարում էին Մեսիա: Շվեյցարացի աստվածաբան Ուլրիխ Լուզը, որը Մատթեոսի համայնքը տեղակայում է Սիրիայում, նշում է, որ սիրիացի քրիստոնյաները նույնպես իրենց անվանում էին նազովրեցիներ:

Պողոս առաքյալը Հիսուսի ծնունդը համարում էր տիեզերական նշանակության իրադարձություն, երբ ծնվեց «նոր մարդը», որը վերացրեց առաջին մարդու՝ Ադամի անկման պատճառած վնասը: Ինչպես Հովհաննեսի տեսակետը՝ Հիսուսի՝ որպես մարմնացած Լոգոսի մասին, հռչակում է Նրա ծննդյան համընդհանուր նշանակությունը, այնպես էլ Պողոսի տեսանկյունից՝ Հիսուսի ծնունդը շեշտում է նոր մարդու և նոր աշխարհի ծնունդը: Պողոսի էսխատոլոգիական տեսակետը Հիսուսի մասին Նրան հակադրում է Ադամի հետ՝ որպես բարոյականության և հնազանդության օրինակի: Ի տարբերություն Ադամի՝ Հիսուսով ծնված նոր մարդը հնազանդվում է Աստծուն և մուտք գործում բարոյականության ու փրկության աշխարհ:

Պողոսի դիտարկմամբ՝ Ադամը դիրքավորվում է որպես առաջին մարդ, իսկ Հիսուսը՝ որպես երկրորդ. Ադամը, անհնազանդությամբ ապականվելով, նույնպես վարակեց մարդկությանը, և անեծքը ժառանգություն մնաց: Մյուս կողմից, Հիսուսի ծնունդը հակակշռեց Ադամի անկումը՝ բերելով փրկագնում և վերականգնելով Ադամի պատճառած վնասը:

Հայրաբանական աստվածաբանության մեջ Պողոսի կողմից Հիսուսի՝ որպես նոր մարդու և Ադամի հակադրությունը հիմք դարձավ Հիսուսի ծննդյան եզակիության և Նրա կյանքի հետագա իրադարձությունների քննարկման համար: Այսպիսով՝ Հիսուսի ծնունդն սկսեց ծառայել որպես «տիեզերական քրիստոսաբանության» մեկնարկային կետ, որտեղ Հիսուսի ծնունդը, կյանքը և հարությունն ունեն համընդհանուր նշանակություն:

2-րդ դարի եկեղեցական հայր Իրենեոսը գրում է. «Երբ Նա մարմնացավ և մարդ դարձավ, նոր սկիզբ դրեց մարդկային էակների երկար շարքում, և մեզ կարճ, համապարփակ ձևով տվեց փրկություն, որպեսզի այն, ինչ մենք կորցրել էինք Ադամի մեջ, այսինքն՝ լինել Աստծո պատկերի և նմանության համաձայն, կարողանայինք վերականգնել Քրիստոս Հիսուսի մեջ»: Իրենեոսը նաև այն վաղ աստվածաբաններից էր, որն օգտագործեց «երկրորդ Ադամի և երկրորդ Եվայի» համաբանությունը (անալոգիա): Նա Կույս Մարիամին բացահայտեց որպես «երկրորդ Եվա» և գրեց, որ Մարիամը «արձակել էր կույս Եվայի կողմից կապված մեղքի հանգույցը», և ինչպես Եվան գայթակղել էր Ադամին՝ անհնազանդվելու Աստծուն, այնպես էլ Մարիամը հնազանդության ուղի էր սահմանել երկրորդ Ադամի, այսինքն՝ Հիսուսի համար՝ ավետումից մինչև Գողգոթա, որպեսզի Հիսուսը կարողանար փրկություն բերել՝ վերացնելով Ադամի վնասը:

4-րդ դարում Հիսուսի ծննդյան հետ կապված հանգամանքների այս եզակիությունը և դրանց փոխազդեցությունը մարմնավորման խորհրդի հետ դարձան կենտրոնական տարր Եփրեմ Ասորու աստվածաբանության և հիմներգության մեջ: Նրա համար Հիսուսի ծննդյան եզակիությունը լրացվեց Արարչի մեծության նշանով՝ հզոր Աստծո՝ որպես փոքրիկ Նորածին աշխարհ մտնելու ունակության միջոցով:

Միջնադարում Հիսուսի՝ որպես երկրորդ Ադամի ծնունդն սկսեց դիտարկվել Երանելի Օգոստինոսի «Ֆելիքս կուլպա» («Երջանիկ անկում») աշխատության համատեքստում և միահյուսվեց Ադամի և Եվայի՝ շնորհից անկման մասին տարածված ուսմունքների հետ: Օգոստինոսը սիրում էր մեջբերել. «Ինչպես Ադամի մեջ մենք բոլորս մահացանք, այնպես էլ Քրիստոսի մեջ մենք բոլորս կկենդանանանք»: Աստվածաբանությունը շարունակվեց մինչև բողոքական Ռեֆորմացիա, և երկրորդ Ադամը Հովհաննես Կալվինի կողմից քննարկված քավության վեց եղանակներից մեկն էր: 20-րդ դարում առաջատար աստվածաբան Կառլ Բարթը շարունակեց նույն դատողությունը և Հիսուսի ծնունդը համարեց Ադամին հաջորդած նոր մարդու ծնունդ:

➥ էջ 7

Ինչո՞ւ համախմբվել Ամենայն Հայոց Կաթողիկոսի շուրջը

1. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շուրջը համախմբումը կանխում է եկեղեցու մասնատումը փոքր խմբավորումների, պաշտպանություն է ընդդեմ պառակտման ու հերձվածի, որոնք կործանարար են հավատացյալների համար:

2. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայ ազգի միասնության տեսանելի առանցքն է, և այդ միասնությունը հիմնված է ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍՈՎ, ԻՐ ՄԱՐՄՆԻ՝ Մայր Եկեղեցու մեջ:

3. Ամենայն Հայոց Կաթողիկոսի իշխանությունը կամայական իշխանություն չէ. առաքելական շնորհի փոխանցելիությունն ավանդված է ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻՑ՝ անընդմեջ շղթայով: Կաթողիկոսին պաշտպանելը նշանակում է պաշտպանել առաքելական ավանդությունը, մեր առաքելահիմն Սուրբ Եկեղեցին, ուր գործում է Աստծո Սուրբ Հոգին:

4. Եկեղեցու նվիրապետությունն աստվածային կարգ է: Աստված տիեզերքում հաստատել է կարգ ու կանոն: Եկեղեցու կառուցվածքը երկնային նվիրապետության (հիերարխիայի) արտացոլումն է երկրի վրա:

5. Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեր հոգևոր հայրն է և եկեղեցու հայրապետն ու առաջնորդը: Ինչպես անվերապահորեն պատվում ենք ծնողին՝ չնայած նրա մարդկային տկարություններին, այնպես էլ անվերապահորեն պատվում և հարգում ենք Ամենայն Հայոց Հայրապետի կաթողիկոսական աստիճանը՝ անկախ անձի նկատմամբ նախասիրությունից: Աստված է պատվիրում. «Պատուէր քո հօրն.... որպէսզի լաւ լինի քեզ համար, եւ երկար ապրես այն երկրի վրայ, որ քո Տէր Աստուածը տալու է քեզ» (Բ Օր. 5:16):

6. Հոգևոր առաջնորդին հնազանդվելը մեծ առաքինություն է: Առաքյալի հորդորն է. «Լսեցէք ձեր առաջնորդներին եւ հնազանդուեցէք նրանց» (Եբր. 13:7):

7. Եկեղեցական նվիրապետությանը հնազանդվելը ոչ թե կապանքներ ու ստրկություն է, այլ խոնարհություն, հեզություն և հպարտության ու եսակենտրոնության հաղթահարման ճանապարհ: Միայն հնազանդություն և խոնարհություն ունենալու պարագայում են ներգործում Եկեղեցու մեջ ներկա Սուրբ Հոգին և առաքելական շնորհը: Քրիստոս Ինքն ասաց. «Սովորեցէք ինձնից, որ հեզ եմ եւ սրտով խոնարհ» (Մատթ. 11:29):

8. Եթե մենք չպաշտպանենք մեր Եկեղեցին, նշանակում է՝ մենք համաձայն ենք պառակտումներին ու հերձվածին, համաձայն ենք, որ մեր առաքելական և ուղղափառ հավատքի ճշմարտությունները ենթարկվեն խիստ աղավաղման, մեզ հեռացնեն մեր ուղղափառ հավատքից ու կորստյան տանեն մեր հոգիները: Առաքելական և Ընդհանրական Եկեղեցին այն միջավայրն է, որտեղ Աստծո Սուրբ Հոգին պահպանում է հավատքի անխաթար դավանությունը:

9. ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՆՊԱՐՏԵԼԻ Է. Տեր Հիսուսը խոստացել է, որ դժոխքի դռները այն չպիտի հաղթահարեն (Մատթ. 16:17): Հետևաբար, Եկեղեցու պաշտպանության կողմնակից լինելը նշանակում է լինել հաղթող կողմում: Իսկ Եկեղեցու դռները կոտրելը տանելու է կորստյան:

10. Հիշեք, որ Եկեղեցին սրբերի թանգարան չէ, այլ մեղավորների հոգևոր հիվանդանոց: Եկեղեցու պաշտպանությունն անհրաժեշտ է, քանի որ այն միակ վայրն է, որտեղ մարդու հոգին բուժվում է մեղքից սուրբ խորհուրդների միջոցով:

11. Եկեղեցու սուրբ հայրերը սովորեցնում են, որ հովվապետներին քննադատելու փոխարեն պետք է աղոթել նրանց համար, քանի որ նրանց պատասխանատվությունն ահռելի է. «Նրանք հսկում են ձեր հոգիների համար, քանի որ հաշիւ են տալու ձեր փոխարէն» (Եբր. 13:7): Հետևաբար, Ամենայն Հայոց Կաթողիկոսի համար մշտապես աղոթելը շատ զորավոր ու անհրաժեշտ օգնություն է Հայրապետի և Եկեղեցու միության համար:

12. Որպես Աստծո օծյալ՝ կաթողիկոսը թե՛ պետական, թե՛ աշխարհական, թե՛ մի խումբ հոգևորական մարդկանց համար անձեռնմխելի անձ է: Ո՛չ աշխարհական կառույցները, ո՛չ առանձին հոգևորականների խմբավորումները չեն կարող հանգստի ուղարկել կամ կարգալույծ հռչակել կաթողիկոսին: Հանգստի ուղարկելու բոլոր կոչերը շինծու են, դավադիր, տիրադավ և չեն բխում մեր Եկեղեցու որևէ կանոնից:

Աստծո օծյալը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընտրվել է 1999 թ.՝ Ազգային-եկեղեցական ժողովի կողմից, ձայների բացարձակ մեծամասնությամբ՝ 276 ձայն (մյուս թեկնածուն՝ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը, ստացել է 163 ձայն): Կաթողիկոսի օծումը կատարվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ *12 եպիսկոպոսների կողմից*, որոնք, ըստ եկեղեցական կարգի և ավանդության, խորհրդանշում են Քրիստոսի 12 առաքյալներին:

Գարեգին Բ Վեհափառի օծմանը մասնակցել և նրան ձեռնադրել են Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Երուսաղեմի Հայոց Պատրիարքը, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքը, ինչպես նաև Մայր Աթոռի և նվիրապետական մյուս Աթոռների բարձրաստիճան հոգևորականներ: Դա խորհրդանշում էր Հայ Եկեղեցու միասնականությունը և բոլոր նվիրապետական աթոռների համախոհությունը:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեր նորագույն պատմության մեջ ամենալեգիտիմ կաթողիկոսներից է:

Բոլոր չարախոսներին. «Դու ո՞վ ես, որ դատում ես ուրիշի ծառային. կանգնած լինի, թէ ընկած՝ իր տիրոջ համար է. բայց նա կը կանգնի, որովհետև կարո՛ղ է Տէրը նրան կանգնուն պահել» (Հռոմ. 14:4):

Սամվել դպիր ԳՐԻԳՈՐՅԱՆ

Անունը՝ որպես գոյաբանական և աստվածաբանական խորհրդանիշ

Անունը մարդու առաջին խոսքն է աշխարհի հետ և աշխարհի առաջին պատասխանն է մարդուն: Մինչ մարդը կխոսի, նրան արդեն կոչում են, և այդ կոչումով նա մտնում է գոյության տարածք: Անուն դնելը երբեք պարզապես տարբերակման կամ անհրաժեշտության գործողություն չէ. այն էության ճանաչում է, ինքնության սահմանում և գոյաբանական դիրքավորում: Փիլիսոփայորեն անունը նշան չէ միայն, այլև իմաստ կրող, քանի որ միավորում է խոսքն ու էությունը մեկ հնչյունի մեջ: Այն, ինչ անուն չունի, մնում է անորոշ, անավարտ և չճանաչված: Այդ պատճառով մարդը, անուն ստանալով, դառնում է ճանաչելի, հիշելի և կոչելի:

Աստվածաբանական տեսանկյունից անունը կոչում է, որովհետև Աստված Ինքն է բացահայտվում անունով: «Ես այն եմ, ՈՐ ԵՄ» (Ելք Գ 14) խոսքը նշանակում է, որ Աստծո անունը նույնական է Նրա լինելությանը: Երբ Աստված անուն է տալիս մարդուն կամ վայրին, Նա այդպիսով հաղորդում է առաքելություն, սահմանում է տեղը փրկագործական պատմության մեջ: Սուրբ Գրքում անունը հաճախ նախորդում է գործին և երբեմն նույնիսկ կանխորոշում է այն: Այդ պատճառով անունը դառնում է մարգարեական խոսք՝ մեկ բառով:

Մարդկային հասարակություններում անուն դնելը խորապես կապված է հիշողության և պատկանելության հետ: Անունը կապում է անհատին ընտանիքի, ազգի և պատմության հետ: Սակայն Սուրբ Գրքում այդ կապն ավելի խորն է. անունը կապում է մարդուն Աստծո կամքի հետ: Անունը կարող է լինել օրհնություն, բայց կարող է դառնալ նաև դատաստան, եթե մարդը հրաժարվի իր կոչումից: Այս երկակի հնարավորությունն է, որ անվանը տալիս է բարոյական և հոգևոր ծանրություն:

Ինքս ունեմ համոզմունք, որ ժամանակակից մարդը հաճախ մոռացել է անվան խորքը: Անունները դարձել են հնչյուններ՝ զրկված իրենց ներքին բովանդակությունից: Սակայն աստվածաշնչյան մտածողության մեջ անունը երբեք անիմաստ չէ: Այն միշտ խոսում է՝ երբեմն լուռ, երբեմն բարձրաձայն: Մեր հոդվածի նպատակն է այդ խոսքը նորից լսելի դարձնել, ցույց տալ, թե ինչպես են աստվածաշնչյան անձնանուններն ու տեղանունները բացահայտում մարդկային ճակատագրեր, պատմական ուղիներ և աստվածային ծրագրեր, և վերջապես հասկանալ, որ անուն դնելը ստեղծագործական արարք է, որը մարդուն դարձնում է Աստծո խոսքի համաշխատակից աշխարհում:

Անունը՝ էության բանալի

Անունը, այո՛, էության գաղափարանիշ է: Առհասարակ, աստվածաշնչյան կերպարների օրինակով կարելի է հասկանալ, որ նրանց ամբողջ կյանքը սահմանված և խոսուն է հենց իրենց անունների նշանակության մեջ. անվան մեջ ամփոփված է անվանակրի ամբողջ կյանքը, որով հասկանալի է նրա առաքելությունը: Այս ամենով հանդերձ՝ դա չի նշանակում, թե անունն անբեկանելիորեն սահմանափակում է անվանակրին և որոշում նրա ամբողջ կյանքի ընթացքը: Անհրաժեշտ է հստակ ընդգծել, որ անվան այս խորքային նշանակությունը չի ենթադրում անվանակրի կյանքի անբեկանելի կանխորոշում, անունն Աստվածաշնչում երբեք չի վերացնում մարդու ազատ կամքը, չի դառնում ճակատագրական շղթա, որից հնարավոր չէ դուրս գալ: Շատ դեպքերում Հին Կտակարանում հանդիպող անունները կարող են չխորհրդանշել որոշակի պատմական անհատի, այլ ներկայացնել մարդկային մի ամբողջ տեսակ կամ հոգևոր վիճակ: Այդպիսի անունները հանդես են գալիս տիպաբանական կերպով՝ որպես մարդկային վարքագծի, հոգեվիճակի կամ աստվածային–մարդկային հարաբերության հավաքական պատկեր: Ամենահստակ օրինակն Ադամ անունն է: «Ադամ» բառը եբրայերենում նշանակում է «մարդ», և հայրաբանական շատ մեկնություններում Ադամը հանդես է գալիս որպես ամբողջ մարդկության հավաքական կերպար: Պողոս առաքյալն էլ է այդպես հիշատակում նրան. «....ինչպես Ադամով բոլորն են մեռնում, այնպես էլ Քրիստոսով բոլորը կենդանանալու են» (Ա Կորնթ. ԺԵ 22): Այստեղ Ադամը ոչ միայն պատմական անձ է, այլև մարդկային անկյալ բնության տիպաբանական անուն: Նույն կերպ «Իսրայել» անունը հաճախ վերաբերում է ոչ թե իրական Հակոբին, այլ ամբողջ ժողովրդին՝ իր հավատարմությամբ կամ անհավատությամբ: Ժողովուրդը կոչված էր լինելու սուրբ ազգ և քահանայական թագավորություն, եթե հավատարիմ մնար Տիրոջ ձայնին. «Հիմա եթե իսկապես լսեք իմ ձայնը և պահեք իմ ուխտը, այն ժամանակ դուք ինձ համար կլինեք սեփական ժողովուրդ բոլոր ազգերից, որովհետև իմն է ամբողջ երկիրը: Դուք ինձ համար կլինեք քահանաների թագավորություն և սուրբ ազգ: Սրանք են այն խոսքերը, որ պետք է ասես Իսրայելին» (Ելք ԺԹ 5–6): Սակայն Աստվածաշունչը նույն անունով նկարագրում է նաև ժողովրդի անհավատությունն ու Աստծուց հեռանալը. «Իսրայելի որդիները չար գործեցին Տիրոջ աչքի առաջ» (Դատ. Բ 11–12): Մարգարեները «Իսրայել» անունով դիմում են մի ժողովրդի, որն արտաքնապես Աստծո ժողովուրդն է, բայց ներքուստ չի ճանաչում Նրան և ընկած է մեղքի մեջ. «Եզը ճանաչում է իր տիրոջը, և էշը՝ իր տիրոջ մսուրը, բայց Իսրայելը ճանաչողություն չունի, և իմ ժողովուրդը իմացություն չունի: Վա՜յ մեղավոր ազգին. անօրենությամբ բեռնավորված ժողովուրդ, չարագործների՛ սերունդ, ապականվա՛ծ զավակներ: Նրանք լքեցին Տիրոջը, անարգեցին Իսրայելի Սրբին» (Ես. Ա 3–4): Նոր Կտակարանում այս միտքն ավելի է խորանում, երբ Պողոս առաքյալն ասում է, որ ոչ բոլորն են Իսրայել, որ Իսրայելից են՝ այդպիսով տարբերելով մարմնավոր և հոգևոր Իսրայելը. «Բայց ոչ իբրև թե Աստծու խոսքը ձախողվել է. որովհետև ոչ բոլորը, ովքեր Իսրայելից են, Իսրայել են....» (Հռոմ. Թ 6): Այս ամենը ցույց է տալիս, որ «Իսրայել» անունն Աստվածաշնչում ոչ միայն ազգի կամ անձի անվանում է, այլև հոգևոր կարգ, որը կարող է արտահայտել թե՛ հավատարմություն Աստծուն, թե՛ անհավատություն՝ կախված ժողովրդի իրական հոգևոր վիճակից: Այս դեպքերում անունը բնութագրում է հոգևոր վիճակ, ոչ թե անհատի կենսագրություն:

Կան նաև դեպքեր, երբ Աստված Ինքն է հրեշտակի կամ մարգարեի միջոցով անվանադրում հատուկ ընտրված անձանց, որոնց առաքելությունը համապատասխանում է տրված անվան նշանակությանը: Այդ անունները դառնում են կոչում և ծառայության ձևակերպում, սակայն նույնիսկ այստեղ անձը մնում է պատասխանատու իր հավատարմության համար: Ամենահայտնի օրինակը Հովհաննես Մկրտիչն է: Հրեշտակն ասում է Զաքարիային. «Նրա անունը Հովհաննես կդնես» (Ղուկ. Ա 13), իսկ Հովհաննես նշանակում է «Տիրոջ շնորհ», «Աստված ողորմած է»: Նրա ողջ ծառայությունը հենց շնորհի, ողորմածության և ապաշխարության քարոզն էր: Նույնը վերաբերում է Հիսուս անվանը. «Նրա անունը Հիսուս կկոչես, որովհետև նա կփրկի իր ժողովրդին մեղքերից» (Մատթ. Ա 21): Այստեղ անունը բացահայտորեն սահմանում է առաքելությունը, բայց նույնիսկ այստեղ անձն ազատ կամքով ընդունում է խաչի ճանապարհը. «Հայր իմ, եթե հնարավոր է, թող այս բաժակն ինձանից հեռու անցնի. բայց ոչ թե ինչպես ես եմ կամենում, այլ ինչպես դու» (Մատթ. ԻԶ 39):

Անունը կոչում է, բայց չի ստիպում: Որպես այդպիսին՝ նման անունները Աստծուց տրված առաքելության սահմանումներ են անվանակիրների համար: Պետք է նշել նաև, որ միշտ չէ, երբ անվան նշանակությամբ առաքելության կանչված կամ կոչման հրավիրված անձինք հասցնում են այդ առաքելությունն ու կոչումն իրենց նշանակետին: Աստվածաշունչը բացեիբաց ցույց է տալիս դեպքեր, երբ անձի կյանքը հակասում է իր անվան իմաստին: Օրինակ՝ Սողոմոն անունը կապված է «խաղաղության» գաղափարի հետ, սակայն նրա կյանքի վերջում մենք տեսնում ենք բաժանում, կռապաշտություն և թագավորության ճեղքում. «Եվ Տերն ասաց Սողոմոնին. .....դու չպահեցիր իմ ուխտը և քեզ հրամայած իմ կանոնները, ես, անշուշտ, քեզնից պիտի խլեմ թագավորությունը և այն պիտի տամ քո ծառային» (Գ Թագ. ԺԱ 1–11): Սա ցույց է տալիս, որ անունը կարող է լինել կոչում, բայց ոչ պարտադրված իրականություն: Նույնը վերաբերում է Սավուղ թագավորին, որի անունը նշանակում է «խնդրված», «ցանկալի», սակայն նրա անհնազանդությունը հանգեցնում է Տիրոջ մերժմանը. «....և որովհետև դու Տիրոջ խոսքը մերժեցիր, նա էլ քեզ մերժեց, որ դու թագավոր չլինես» (Ա Թագ. ԺԵ 23): Այս օրինակները հաստատում են, որ անունը չի գործում ինքնաբերաբար, մեքենայորեն: Մարդը կարող է ապրել իր անվան խորքից դուրս: Մնացյալ դեպքերում, ինչպես հին ժամանակներում, այնպես էլ մինչ օրս, մարդու անունը և նրա նշանակությունը կարող են չարտահայտել ամբողջ կյանքի իմաստն ու գործունեությունը, բայց միևնույն ժամանակ գրեթե անխուսափելիորեն թողնում են ազդեցություն կյանքի որոշ դրվագներում: Այդ ազդեցությունը երբեմն կապված է անվան բառային նշանակության հետ, երբեմն՝ այն կերպարի, որի պատվին տրվել է անունը: Այսպես՝ անունը դառնում է ոչ թե ճակատագիր, այլ մշտական երկխոսություն մարդու, իր հիշողության և իր ընտրությունների միջև:

Շատ դեպքերում անունը չի բնութագրում ամբողջ կյանքը, բայց ազդեցություն է թողնում որոշ վճռորոշ պահերի: Օրինակ՝ Պետրոս՝ «Վեմ» անունը տրվում է նրան որպես խոստում՝ «այս վեմի վրա կշինեմ իմ Եկեղեցին» (Մատթ. ԺԶ 18), սակայն Պետրոսը նույն այդ անունով նաև ուրանում է Քրիստոսին. «....Նա բոլորի առաջ ուրացավ ասաց. Չգիտեմ, թե ի՞նչ ես խոսում....» (Մատթ. ԻԶ 69–75): Անվան իմաստը լիովին իրագործվում է ոչ թե անմիջապես, այլ հարությունից հետո, երբ Պետրոսը դառնում է Եկեղեցու վկայության սյուն: ➥ էջ 7

Խրիմյան Հայրիկի կերպարը գրականության մեջ և արվեստում

Սկիզբը՝ 2025 թ. թիվ 21, 23

Խրիմյան Հայրիկի հետ հանդիպումներն անջնջելի տպավորություն են թողել Ավետիք Իսահակյանի վրա, որոնք հետագայում դարձան նրա «Խրիմյան Հայրիկ» գողտրիկ հուշապատման նյութ: Վարպետը ջերմագին զգացումներով, խորին ակնածանքով ու որդիական սիրով էր վերաբերվում Հայոց Հայրիկին: Մինչ հուշապատմանն անդրադառնալը՝ նշենք, որ մեծ բանաստեղծի առաջին հանդիպումը Մկրտիչ Խրիմյանի հետ տեղի է ունեցել 1897 թ. Վիեննայում: Հայոց Հայրիկին դիմավորող հայ երիտասարդների խմբում է եղել նաև Իսահակյանը. «Հայերս խումբ-խումբ մտնում ենք դահլիճը, ուր բազմած է Հայրիկը՝ ժպիտը դեմքին, պատկառելի և սիրալիր,— հիշում է բանաստեղծը,— սակայն խոր և խելոք աչքերում պարզապես շողում է բարձր հոգու այն սրբազան վիշտը, որ բոլորիս վիշտն է, բայց նա միայն իր երկնային սրտով զգում է այնքան խորը և իր ողջ էությամբ: Ահա մենք՝ նրա որդիներս, խոնարհվում ենք նրա առաջ, համբուրում ենք կենդանարար աջը.... Հայրիկը բոլորիս գուրգուրում է, սիրող հոր պես հարցնում է յուրաքանչյուրի դրությունը, պարապմունքը, հետաքրքրվում նրա կյանքով, խրատում է, կատակում է.... »:

Երկրորդ անգամ Ա. Իսահակյանը Խրիմյան Հայրիկին հանդիպել է 1901 թ. սեպտեմբերին, երբ այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Այդ նույն տարվա մայիսին, երբ նա գտնվում էր Վենետիկում, Հայր Ղևոնդ Ալիշանը խնդրում է նրան, որ իր անունից ջերմագին ու սիրալի ողջույն փոխանցի Հայոց Հայրիկին: Եվ ահա Հայաստան վերադառնալով ու այցելելով Ս. Էջմիածին՝ Իսահակյանին մի երեկո բախտ է վիճակվում հանդիպելու Հայոց Հայրիկի հետ, համբուրելու նրա աջը և զրույցի բռնվելու: Պահը Իսահակյանի համար հուզիչ էր, անմոռանալի: Բանաստեղծը հիշում է, որ սիրտն ուժգին բաբախում էր հուզմունքից և ուրախությունից: Հայրիկն առաջարկում է նստել: Իսահակյանը, դիմելով Հայոց Հայրիկին, ասում է, որ իրեն շատ բախտավոր է զգում՝ ալեզարդ Նահապետի՝ Ալիշանի կարոտալի ողջույնները Վեհափառին փոխանցելու համար: Հայրիկը շնորհակալություն է հայտնում ու հետաքրքրվում, թե երբ է նա Վենետիկում եղել, և ինչպես է Ղևոնդ Ալիշանի առողջական վիճակը: Իսահակյանը պատասխանում է, որ գարնանն է Վենետիկում եղել և մի քանի անգամ այցելել է մեծավաստակ Նահապետին՝ խոր ցավով հայտնելով, որ Ալիշանն արդեն հիվանդ ու թույլ է: Հայոց Հայրիկը տխրում է՝ ասելով, որ իր և Ալիշանի տարիքը գրեթե նույնն է, որ շատ է սիրում նրան և բարձր է գնահատում նրա ստեղծագործությունները, և որ Ալիշանն իր վրա մեծ ազդեցություն է թողել, ոգևորել ու ներշնչել: Իսահակյանը Հայրիկին հայտնում է, որ Ալիշանն էլ ուրախությամբ ասում էր, որ Հայոց Հայրիկն իրենից հարյուր օրով մեծ է, բայց դեռ ձի է նստում և անձամբ այցելում ժողովրդին. «Միշտ նախանձում էր Ձեզ, Վեհափառ Հայրիկ, և ասում էր, թե Հայրիկի բանն ուրիշ է. նա առույգ է մնացել, որովհետև Մասիսի շուքին ներքո է քնում, հայոց դաշտերի ծաղկանուշ հովն է ծծում, Արաքսի ջուրը խմում:

Այստեղ Հայրիկը ուրախ և սրտանց ծիծաղեց:

— Ան կնախանձի ինձ, ևս վաղը կկարգադրեմ, որ անոր Մասիսի հողեն, Երասխի ջրեն ու Հայաստանի ծաղիկներեն քիչ մը վերցնեն և փոքրիկ արկղով մը ղրկեն Վենետիկ:

Ինչպես հետո իմացա, Հայրիկի կողմից ուղարկվել էր մի փոքր արկղ այդ արմաղաններով, բայց մինչև հասնելը, դժբախտաբար, սիրելի Նահապետը արդեն վախճանված էր եղել (1901 թ. նոյեմբերի մեջ)»:

Ընդհանրապես Հայոց Հայրիկը խոսքաշեն զրուցակից էր, շատ էր սիրում զրուցել. նա հարցեր էր տալիս, բայց երբեմն պատասխանի չսպասելով՝ ինքն էր շարունակում պատմել ու ծիծաղել: Իսահակյանի հետ զրույցի ընթացքում Հայոց Հայրիկն ասում է, որ Կովկասում ճանաչում ու շատ է սիրում երկու բանաստեղծի՝ Հովհաննես Հովհաննիսյանին և Հովհաննես Թումանյանին, իսկ այժմ ճանաչեց նաև երրորդին՝ Իսահակյանին՝ շեշտելով, որ Իսահակյանը երիտասարդ է, դրա համար էլ իր բանաստեղծություններում հաճախ է երգում բնության ու սիրո մասին:

Ավետիք Իսահակյանը վանքում մնում է մի քանի օր, և գրեթե ամեն երեկո Հայրիկը նրան ընդունելության էր արժանացնում, իսկ հրաժեշտին խնդրում, որ ամեն անգամ՝ Էջմիածնում լինելիս, իրեն անպայման տեսակցության գա:

1902 թ. հունվարին Իսահակյանը նորից այցելում է Սուրբ Էջմիածնի վանք, և կրկնվում են գեղեցիկ երեկոները, խոսք ու զրույցները: Հայոց Հայրիկը ջերմորեն է ընդունում Իսահակյանին՝ կատակելով, որ բանաստեղծը, երևի, կարոտել է Հայրիկին ու վանքի հացը: Խրիմյանը հետաքրքրվում է Իսահակյանի գործունեությամբ, և նա մանրամասնորեն պատմում է իր ճանապարհորդությունների մասին: Հայրիկը գովում է Վարպետին՝ ասելով, որ և՛ ճանապարհորդում է, և՛ գրում, ինչպես ինքն էր արել ժամանակին: Այնուհետև հավելում է, որ վերջին շրջանում շատ բաներ է գրել և ցանկանում է դրանք կարդալ Իսահակյանի համար՝ խնդրելով անկեղծ ու ճշմարիտ կարծիք հայտնել՝ առանց երկմտելու. «Հիմա դուն պիտի մտածես, որ Հայոց կաթողիկոսի գրածները չի կարելի քննադատել, կամ անոր շիտակ բան մը ըսել, ինչպես մեր վարդապետները կըսեն, երեսիս մի բան կըսեն, դուրսը ուրիշ: Ու գիտցիր, որ բանաստեղծները միշտ ճշմարիտ պիտի խոսին աշխարհիս տերերի առաջ: Մեզ ալ աշխարհը տեր շինեց. Քրիստոսը տեղ չուներ գլուխը դնելու, առաքյալները անտուն ու բոբիկ ման կուգային, բայց հիմա մենք՝ անոնց ժառանգները վեհարաններու մեջ կապրինք»:

Կարդացած գործի բովանդակությունը հետևյալն էր. Խրիմյանը գնում է Ս. Թադեոս առաքյալի վանք՝ ուխտի, բախում է վանքի դարպասը՝ ասելով. «Բա՛ց, Թադե՛ոս առաքյալ, ես եմ՝ քո հաջորդը, գահիդ ներկա տերը»: Առաքյալը ներսից պատասխանում է, որ ինքը գահ չունի, ի՞նչ գահի մասին է խոսքը, ինքը բռնակալ կամ իշխան չէ, որ գահ ունենա:

Հայրիկը պատասխանում է. «Մի՞թե չգիտես, որ գահդ Ս. Էջմիածնում է՝ շքեղ Վեհարանի մեջ. շքեղ գահ, ծառաներ, հարստություն»:

«Մեր տեր Հիսուս Քրիստոսը,— ասում է առաքյալը,— անտուն էր, ու Ինքը՝ ծառա: Դուք Նրա աշակերտները չեք. գնա՛, չեմ ընդունիլ....»: Եվ առաքյալը չի ընդունում Հայրիկին:

Վերջացնելով՝ Խրիմյանը սրտանց ծիծաղում է: Այդ գրվածքի մեջ, Իսահակյանի դիտարկմամբ, Հայրիկը երևում է իր դեմոկրատիկ բովանդակ էությամբ:

Այնուհետև Հայրիկը Իսահակյանին է տալիս իր գրվածքների տետրը՝ խնդրելով, որ դրանք հանգիստ կարդա ու հաջորդ երեկո իր դիտողությունները ներկայացնի: Իսահակյանը հիշում է, որ այդ ստեղծագործություններն ազատ ու անկաշկանդ ոտանավորներ էին՝ գրված 82-ամյա, փորձառու գրիչ ունեցող մարդու կողմից, որոնք ավելի ուշ եգիպտոսում տպագրվեցին «Վերջալույսի երգեր» վերնագրով:

Հաջորդ երեկո, խրախուսված Հայրիկի ջերմ վերաբերմունքից, Իսահակյանը համարձակվում է մի քանի դիտարկում անել՝ նշելով, որ ոտանավորները չափազանց երկար են, իսկ լեզուն՝ խառն, քանի որ այնտեղ միախառնված են արևելահայ և արևմտահայ բառաձևերը: Հայրիկը համաձայնում է այդ դիտողությանը՝ բացատրելով, որ Կովկասում ապրելու պատճառով իր լեզուն խառնվել է, և որ այդպես է նաև խոսում: Իսկ ոտանավորների երկարությունը նա կապում է երկար գիշերների հետ. բազմազբաղ Հայրիկը գիշերները չէր քնում, շրջում էր դահլիճում, ծխում, երգում և գրում, մինչև անքնությունը հաղթահարեր:

Իսահակյանի հուշերից իմանում ենք նաև, թե ինչ երգեր էր երգում Խրիմյանը. Հայրիկը երգում էր շարականներ, ներբողներ և հոգևոր տաղեր՝ Շնորհալու, Կեչառեցու, Պետրոս Ղափանցու, Գրիգորիս Աղթամարցու և Բաղդասար Դպիրի ստեղծագործություններից: Հատկապես սիրում էր Վանի և Մուշի գեղջկական երգերը, որոնք վաղուց սովորել էր Վարագավանքի ու Մշո Սուրբ Կարապետի ուխտավորներից: ➥ էջ 8

Սնահավատությունը՝ հոգևոր վտանգ, և աղոթքը՝ ճշմարիտ ճանապարհ

Սնահավատությունը մարդկային կյանքում այն երևույթն է, որի ազդեցությամբ մարդը, առանց հիմնավոր պատճառի, հավատում է նշանների, պատահական իրադարձությունների կամ կախարդական հավատալիքների ուժին: Այն ուղեկցել է մարդկությանը պատմության սկզբից՝ տարբեր ձևերով դրսևորվելով հին մշակույթներում, միջնադարյան ավանդույթներում և անգամ մեր օրերում: Աշխարհը լի է սնահավատությունների օրինակներով. մարդիկ վախենում են չար աչքից, նախազգուշական նշաններ են որոնում կամ ամոթալի հավատալիքների հետևանքով որոշումներ ընդունում:



Նիկոլաս Մաս. «Աղոթող ծեր կինը», 1656 թ.

Քրիստոնեական ուսմունքի համաձայն՝ սնահավատությունը հոգևոր վտանգ է, քանի որ այն խաթարում է մարդու հարաբերությունն Աստծո հետ և խոչընդոտում ճշմարիտ հավատքի զարգացմանը: Երբ մարդն իր հույսը դնում է արտաքին նշանների, թվերի կամ ձևական ծեսերի վրա, նա աստիճանաբար հեռանում է Աստծո կենդանի ներկայությունից՝ հավատքը փոխարինելով անորոշ և մոլոր համոզումներով:

Բազմաթիվ քրիստոնյա վարդապետներ, սկսած վաղ դարերից մինչև մեր ժամանակները, ընդգծում են, որ սնահավատությունը վտանգավոր է ոչ միայն հավատքի տեսանկյունից, այլև հոգեբանական առումով: Այն մարդուն դարձնում է անընդհատ անհանգիստ, ստիպում ամեն մանրուք նշան համարել:

Քրիստոնեական ճանապարհն առաջարկում է հակառակ լուծումը՝ հրաժարվել սնահավատությունից և փոխարինել այն հավատարմությամբ, աղոթքով, հոգևոր գիտակցությամբ ու բարոյական վարքով: Երբ մարդն իր մտքերը դարձնում է Աստծո կամքին, նրա կյանքը լցվում է ներքին խաղաղությամբ և ազատությամբ՝ առանց մշտական վախերի ու կասկածների: Ճշմարիտ հավատքը մարդուն տալիս է այն համոզումը, որ ոչ մի «վատ նշան» կամ «անբարենպաստ օր» չի կարող ազդել նրա վրա, եթե նա ապրում է Աստծո օրհնության ներքո: Չնայած գիտության, կրթության և տեխնոլոգիական առաջընթացի հսկայական ձեռքբերումներին՝ սնահավատությունը մեր օրերում շարունակում է պահպանել իր ազդեցությունը: Ժամանակակից մարդն ապրում է թվային դարաշրջանում, բայց հաճախ նրա որոշումները և զգացմունքային արձագանքները պայմանավորված են լինում նույն այն հավատալիքներով, որոնք գոյություն ունեին հազարավոր տարիներ առաջ:

Սնահավատություն է երազգին հավատալը: Երազների մեկնության առնչությամբ Սուրբ Գիրքը հետևյալն է փոխանցում մեզ. «Ով հավատում է երազներին, նա նման է մեկին, որը փորձում է բռնել ստվերը և վազել քամու հետևից: Ինչպես ունայն է դեմքի անդրադարձը դեմքի դիմաց, այնպես էլ՝ երազներ տեսնելը» (Սիրաք 31.2–3): Այսինքն՝ ունայն է երազներին հավատալը կամ դրանցով առաջնորդվելը: Աստված առանձին մարդկանց կարող է երազի միջոցով հայտնություններ տալ, սակայն դրանք հազվադեպ են պատահում և իրենց առանձին մեկնությունն ունեն: Այդպիսի երազներ նշված են Աստվածաշնչում, և դրանց մեկնության համաձայն՝ այդ երազներում ամեն ինչ խորհրդանիշ է՝ համապատասխան բացատրություն ունեցող: Եկեղեցական հեղինակների համոզմամբ՝ երազներն ավելի շատ լինում են մարդու ապրումներից, առօրյա գործողությունների ու մտածմունքների հետ կապված:

Սնահավատությունը մարդկության հոգեբանական ամենահին երևույթներից է: Երբ մարդը դեռ չէր կարողանում գիտությամբ բացատրել կայծակը, երազը կամ մահը, նա այդ ամենին վերագրում էր մոգական, աստվածային կամ չար ուժերի ազդեցություն: Այդպես ձևավորվեցին առաջին սին հավատալիքները, որոնք հետագայում խորապես ներթափանցեցին մշակույթ, կրոն և առօրյա կյանք:

Հին Եգիպտոսում, օրինակ, մարդիկ հավատում էին, որ որոշ խորհրդանշաններ ունեն պաշտպանիչ ուժ: Այդպիսին էր «Հորուսի աչքը», որն արտահայտում էր ամբողջականության, պաշտպանության և աստվածային հսկողության իմաստ: Այն կրում էին որպես կախազարդ, փորագրում գերեզմանների վրա և նույնիսկ պահում տներում՝ չար աչքից ու հիվանդություններից զերծ մնալու համար:

Միջագետքում սնահավատությունն առավել կապված էր աստղագիտական ընկալումների հետ: Աստղերին նայելը չէր սահմանափակվում պարզապես երկնային մարմինների ուսումնասիրությամբ. այն դիտվում էր որպես աստվածային լեզու՝ մի համակարգ, որով աստվածները հաղորդում էին մարդկանց իրենց կամքը: Մոգերը հավատացնում էին, որ երկնային նշանների մեկնությամբ հնարավոր է կանխատեսել պատերազմները, բերքատվությունը, բնական աղետները և անգամ մարդու անձնական ճակատագիրը: Այս գաղափարը հետագայում դարձավ հորոսկոպային մտածողության հիմքը, որը տարբեր ձևերով պահպանվեց մինչև նոր դարերը:

Հին Հունաստանում և Հռոմում սնահավատության արտահայտություններն առավելապես կապված էին մարգարեությունների և զոհաբերությունների հետ: Մարդիկ հաճախ էին դիմում ուխտատեղիներին՝ օրինակ Դելփյան մարգարեի տաճարին՝ աստվածային պատասխաններ ստանալու համար: Նրանք հավատում էին, որ զոհաբերություններով կարելի է մեղմացնել աստվածների բարկությունը, փոխել կանխորոշված ճակատագիրը կամ ապահովել հաջողություն որևէ գործում: Այս ամենը ցույց է տալիս, որ սնահավատությունը հնագույն ժողովուրդների համար ոչ թե պարզապես անհիմն հավատ էր, այլ խորապես արմատավորված մշակութային երևույթ, որն արտահայտում էր նրանց ձգտումը՝ կապ հաստատելու անտեսանելի, վերին ուժերի հետ:

Սնահավատությունը միշտ քննադատվել է Սուրբ Գրքում՝ որպես հոգևոր մոլորություն: Ինչպես ասում է Տերը. «Մի՛ սովորէք գնալ հեթանոսների ճանապարհներով և մի՛ զարհուրէք երկնքի նշաններից, որոնցից նրանք են վախենում» (Երեմ. 10.2): Այս խոսքերը ցույց են տալիս, որ սնահավատությունը հակադրվում է հավատքին, քանի որ այն հիմնված է վախի, ոչ թե վստահության վրա: ➥ էջ 8

Անունը՝ որպես գոյաբանական և աստվածաբանական խորհրդանիշ

↩ էջ 5

Սա ցույց է տալիս, որ անունը կարող է լինել ուղենիշ, որը կյանքի ընթացքում աստիճանաբար բացահայտվում է: Աստվածաշնչյան և հետագա կրոնական ավանդության մեջ հաճախ մարդը կոչվում է մեկ այլ կերպարի պատվին: Այդ դեպքում անունն սկսում է գործել որպես հիշողության և օրինակելի կերպարի մշտական ներկայություն: Օրինակ՝ բազմաթիվ Հովհաննեսներ արդեն ապրում են Հովհաննես Մկրտչի և ավետարանչի կերպարի ազդեցության ներքո: Նույն տրամաբանությամբ՝ Տիմոթեոսը հիշեցնում է իր «մաքուր հավատքի» ժառանգության մասին, որը փոխանցվել է ընտանիքի միջոցով. «Մտաբերում եմ այն անկեղծ հավատը, որ քո մեջ է, որ սկզբում կար քո Լոիդա տատի ու քո Եվնիկե մոր մեջ. համոզված եմ, որ այն նաև քեզանում է» (Բ Տիմ. Ա 5): Այստեղ անունը դառնում է ավանդություն կրող, ոչ պարտադրող օրենք:

Այսպիսով՝ պետք է արձանագրենք, որ Սուրբ Գիրքն անունը չի դիտարկում որպես կամայական հնչյունների համադրություն: Անունն Աստվածաշնչում էության սահմանում է, կոչում է, հայտնություն է և երբեմն՝ դատավճիռ: «Եվ Աստված կոչեց լույսը՝ օր, և խավարը՝ գիշեր» (Ծնն. Ա 5). դեռևս արարչագործության առաջին էջերում տեսնում ենք, որ անուն դնելը իշխանություն է, գոյությանն իմաստ հաղորդելն է: Երբ Ադամը անուն տվեց կենդանիներին՝ «....ինչ անուն որ տվեց մարդը ամեն կենդանի հոգու, այդ էր նրա անունը» (Ծնն. Բ 19), անունը դարձավ նրանց բնույթի արտահայտություն:

Այս տրամաբանությամբ՝ աստվածաշնչյան անձնանուններն ու տեղանունները ոչ թե պատահական են, այլ խորապես նախանշում են տվյալ անձի կամ վայրի դերը փրկագործական պատմության մեջ:

Քրիստոսի Ծննդյան եկեղեցի, Բեթղեհեմ, 330-ական թթ.

Սուրբ Ծննդյան տաճարի խորանը, կենտրոնում՝ Քրիստոսի ծննդյան տեղը խորհրդանշող արծաթյա աստղը

Սուրբ Ծնունդ և անունների լրացումը Քրիստոսով

ԲԵԹՂԵՀԵՄ — «Հացի տուն» և փրկության կենտրոն

Բեթղեհեմ անունը բառացիորեն նշանակում է «հացի տուն»: Սա ոչ թե աշխարհագրական պատահական անուն է, այլ մեսիական խոր նշանակություն ունեցող տեղանուն: «Դու, Բեթղեհեմ Եփրաթա.... քեզանից պիտի ելնի Իսրայելի իշխանը» (Միքիա Ե 2) մարգարեությունը բացահայտորեն կապում է այս փոքր քաղաքը համաշխարհային փրկության հետ: Այնտեղ ծնվում է Հիսուս Քրիստոսը (Ղուկ. Բ 4–7), Որը հետագայում ասում է. «Ես եմ կյանքի հացը» (Հովհ. Զ 35): Այսպիսով՝ Հացը ծնվում է Հացի տանը: Տեղանունը դառնում է աստվածային տնտեսության լեզու:

Եկեղեցին՝ որպես նոր Բեթղեհեմ

Եկեղեցին կոչված է լինելու այն, ինչ Բեթղեհեմն էր Սուրբ Ծննդյան գիշերը: Այն պետք է լինի «հացի տուն»՝ ոչ նյութական, այլ երկնային հացի: «Ես եմ կյանքի հացը» (Հովհ. Զ 35). այս խոսքն իրականանում է Սուրբ Պատարագում: Երբ հավատացյալը մտնում է եկեղեցի, նա մուտք է գործում Բեթղեհեմի խորհուրդ: Այստեղ Քրիստոսը չի ծնվում միայն պատմական հիշողությամբ, այլ ներկայությամբ, և Եկեղեցին անընդհատ կենդանի է պահում այդ Ծնունդը: Սուրբ Սեղանը դառնում է մսուր, հացն ու գինին՝ մարմին և արյուն: Այսպիսով՝ Բեթղեհեմը դառնում է համընդհանուր իրականություն: Ամեն եկեղեցի, որտեղ մատուցվում է Պատարագ, դառնում է հացի տուն աշխարհի համար:

Սուրբ Ծնունդը՝ որպես անունների վերջնական հայտնություն

Սուրբ Ծնունդն այն պահն է, երբ Աստված բացահայտում է Իր Անունը մարմնով: «Եվ նրան Էմմանուել կկոչեն» (Մատթ. Ա 23). այս անունը նշանակում է «Աստված մեզ հետ է»: Այստեղ անունն այլևս բացատրության կարիք չունի: Այն դառնում է ներկայություն: Քրիստոսի ծնունդը ցույց է տալիս, որ Աստված խոսում է մարդու լեզվով՝ անունով: Այդ անունը դառնում է փրկության կենտրոնը: Սուրբ Ծննդյան տոնը հիշեցնում է, որ աշխարհը փրկվեց ո՛չ գաղափարով, այլ Անունով: Այդ Անունը տրվեց մարդկությանը՝ որպես վերջին խոսք: Եվ մինչ աշխարհի վախճանը Եկեղեցին պիտի շարունակի հնչեցնել այդ Անունը. «Ով Տիրոջ անունը կանչի, կփրկվի» (Հռոմ. Ժ 13):

Եկեղեցին՝ որպես «հացի տան»՝ Բեթղեհեմի էութենական շարունակություն

Քրիստոսի ծնունդով Բեթղեհեմի խորհուրդը չի ավարտվում, այլ փոխանցվում է Եկեղեցուն: Եկեղեցին դառնում է այն վայրը, որտեղ շարունակաբար բաժանվում է կյանքի հացը՝ Սուրբ Հաղորդությունը: «Այս հացը, որ ես կտամ, իմ մարմինն է աշխարհի կյանքի համար» (Հովհ. Զ 51) խոսքը Եկեղեցին դարձնում է մշտական Բեթղեհեմ: Այս պատճառով քրիստոնեական Եկեղեցիները՝ այդ թվում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, իրենց էությամբ «հացի տներ» են՝ ոչ նյութական, այլ հոգևոր իմաստով: Սուրբ Ծննդյան տոնը հենց այս ճշմարտության տոնական բացահայտումն է. Աստված մտնում է պատմություն՝ որպես կերակուր, կյանք և փրկություն:

Աստվածաշնչյան տեղանունները, ինչպես անձնանունները, չեն սահմանափակում պատմությունը, այլ բացահայտում են դրա խորքային իմաստը: Դրանք չեն պարտադրում ճակատագիր, բայց մշտապես վկայում են ընտրության, կոչման և պատասխանատվության մասին: Տեղը դառնում է սուրբ կամ դատապարտելի ոչ իր անվան պատճառով, այլ այն բանի, թե ինչ է կատարվում այնտեղ Աստծո ներկայության հանդեպ մարդու վերաբերմունքով: Եվ այսպիսով՝ ամբողջ Սուրբ Գիրքը խոսում է նույն ճշմարտության մասին. անունը՝ թե՛ անձի, թե՛ վայրի, Աստծո խոսքն է մարդու պատմության մեջ: Աստվածաշնչում անունը ճակատագիր է, մարգարեություն և դատաստան: Այդ պատճառով անուն դնելը երբեք չի կարող լինել անիմաստ: Մեկ բառով մարդուն կամ վայրը բնութագրել նշանակում է հաղորդակցվել Աստծո ստեղծագործական լեզվով, և այդ լեզվի գագաթը մի Անուն է, «Որ ամեն անունից վեր է» (Փիլ. Բ 9)՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ:

Սուրբ Ծնունդն այն պահն է, երբ բոլոր անունները գտնում են իրենց վերջնական իմաստը. «Բանը մարմին եղավ և բնակվեց մեր մեջ» (Հովհ. Ա 14): Այստեղ անունը և էությունը միաձուլվում են: Հիսուսի ծնունդը Բեթղեհեմում ցույց է տալիս, որ Աստված գիտակցաբար ընտրում է անունների լեզուն: Հացի տանը ծնվածը դառնում է Կյանքի Հացը: Այս պահից հետո Եկեղեցին կոչված է լինելու նույն Բեթղեհեմը՝ հացի տուն մարդկության համար: Սուրբ Պատարագը դառնում է շարունակվող Ծնունդ: Քրիստոսը մշտապես ծնվում է այնտեղ, որտեղ Նրա անունը ճշմարտապես ընդունվում է: Այսպիսով՝ Սուրբ Ծնունդը դառնում է անունների աստվածաբանական գագաթնակետը: Այստեղ անունն այլևս միայն նշանակություն չէ, այլև կենդանի ներկայություն:

Շարունակելի

Հովհաննես սրկ. ԷՎԻՆՅԱՆ
Դիանա ՔՈՉԱՐՅԱՆ

Պատմա-աստվածաբանական ակնարկ Հիսուսի ծննդյան վերաբերյալ

↩ էջ 4

Բարթի աստվածաբանության մեջ նշվում է, որ ի տարբերություն Ադամի՝ Հիսուսը գործել է որպես հնազանդ Որդի՝ կատարելով աստվածային կամքը, և հետևաբար՝ ազատ է եղել մեղքից, ուստի կարող է բացահայտել Հոր արդարությունը և բերել փրկություն:

Հիսուսի ծնունդն ազդեցություն է ունեցել քրիստոսաբանական հարցերի վրա քրիստոնեության վաղ շրջանից ի վեր: Ղուկասի քրիստոսաբանությունը կենտրոնանում է Քրիստոսի գոյության երկրային և երկնային դրսևորումների երկակի բնույթի դիալեկտիկայի վրա, մինչդեռ Մատթեոսի քրիստոսաբանությունը կենտրոնանում է Հիսուսի առաքելության և Նրա՝ որպես Փրկչի դերի վրա:

Հիսուսի աստվածային լինելու հավատը հանգեցնում է հետևյալ հարցին. «Հիսուսը տղամարդ էր, որը պետք է ծնվեր կնոջի՞ց, թե՞ Աստված ծնվեց կնոջից»: Քրիստոնեության առաջին չորս դարերում ներկայացվել է Հիսուսի ծննդյան բնույթի վերաբերյալ վարկածների և համոզմունքների լայն շրջանակ: Որոշ բանավեճեր վերաբերում էին Կույս Մարիամի Աստվածածին տիտղոսին: Այս տեսակետներից մի քանիսը ի վերջո հայտարարվեցին հերետիկոսություններ, մյուսները հանգեցրին պառակտումների և Եկեղեցու նոր ճյուղերի ձևավորման:

Մատթեոս 1:21-ի փրկագործական շեշտադրումը հետագայում ազդեց աստվածաբանական հարցերի և Հիսուսի Սուրբ Անվան նվիրվածության վրա: Մատթեոս 1:23-ը Նոր Կտակարանում Էմմանուելի քրիստոսաբանության միակ բանալին է: Սկսած 1:23-ից՝ Մատթեոսը հստակ հետաքրքրություն է ցուցաբերում Հիսուսին որպես «Աստված մեզ հետ» ներկայացնելու և հետագայում Հիսուսի մասին Էմմանուելի բնութագրումը զարգացնելու հարցում: «Էմմանուել» անունը Նոր Կտակարանում այլուր չի նշվում, բայց Մատթեոսը հիմնվում է դրա վրա Մատթեոս 28:20-ում («Ես ձեզ հետ եմ բոլոր օրերում, մինչև աշխարհի վախճանը»)՝ ցույց տալու, որ Հիսուսը հավատացյալների հետ կլինի մինչև դարաշրջանի վախճանը: Ուլրիխ Լուզի խոսքով՝ Էմմանուելի մոտիվը Մատթեոսի ամբողջ Ավետարանը ներառում է 1:23-ից մինչև 28:20 համարները՝ բացահայտ և անուղղակիորեն հայտնվելով մի քանի այլ հատվածներում:

4-րդ և 5-րդ դարերում մի շարք եկեղեցական ժողովներ են գումարվել՝ այս հարցերը լուծելու համար: Եփեսոսի ժողովը քննարկեց հիպոստասը ընդդեմ մոնոֆիզիտության և նեստորականության (երկու բնությունների բաժանում) հարցերը: Քաղկեդոնի՝ 451 թվականի ժողովը մեծ ազդեցություն ունեցավ

Բարտոլոմե Էստեբան Մուրիլյո. «Հովիվների երկրպագությունը», 1650 թ.

և նշանավորեց շրջադարձային կետ քրիստոսաբանական բանավեճերում, որոնք բաժանեցին Արևելյան Հռոմեական կայսրության եկեղեցին 5-րդ դարում: Քաղկեդոնում հռչակվեց հիպոստատիկ միությունը, այսինքն՝ Հիսուսը և՛ լիովին աստվածային է, և՛ լիովին մարդկային, իսկ Հայ Եկեղեցին դավանաբանորեն հավատարիմ մնաց միաբնակությանը, այսինքն՝ մեկ աստվածամարդկային բնության գոյությանը Հիսուսի անձում:

5-րդ դարում Հռոմի պապ Լևոն Ի-ը 10 քարոզ կարդաց Հիսուսի ծննդյան մասին, որոնցից 7-ը պահպանվել են: 451 թ. դեկտեմբերի 25-ի քարոզն արտահայտում է նրա մտահոգությունը, այն է՝ բարձրացնել Ծննդյան տոնի կարևորությունը և դրա հետ մեկտեղ ընդգծել Քրիստոսի երկու բնությունը՝ պաշտպանելով հիպոստատիկ միության քրիստոսաբանական ուսմունքը: Պապը հաճախ իր՝ Ծննդյան քարոզներն օգտագործում էր որպես առիթ՝ հակառակ տեսակետները քննադատելու համար՝ առանց անվանելու հակառակորդին:

13-րդ դարում Թովմա Աքվինացին անդրադարձավ Հիսուսի ծննդյան քրիստոսաբանական խնդիրներին՝ արդյո՞ք այն պետք է վերագրվի անձին (Խոսքին), թե՞ միայն այդ անձի ենթադրյալ մարդկային բնությանը: Աքվինացին անդրադարձավ ծննդյանը «Summa Theologica»-ի 8 հոդվածներում, որոնցից յուրաքանչյուրն առանձին հարց էր արծարծում: Աքվինացին պնդեց, որ հիպոստատիկ միության մեջ Քրիստոս ունի երկու բնություն՝ մեկն ստացած Հորից՝ հավիտենապես, մյուսը՝ մորից՝ ժամանակի ընթացքում:

Ռեֆորմացիայի ժամանակ ժան Կալվինը պնդում էր, որ Հիսուսը սրբագործվել է ոչ միայն որպես «մարմնացած Աստված» (Deus manifestatus in carne)՝ Իր կուսական ծննդյան շնորհիվ, այլև Սուրբ Հոգու գործողության միջոցով՝ Իր ծննդյան պահին: Կալվինի համաձայն՝ Հիսուսն ազատված էր սկզբնական մեղքից, քանի որ սրբագործվել էր ծննդյան պահին, որպեսզի Նրա սերունդն անարատ լիներ, ինչպես որ սերունդն անարատ էր Ադամի անկումից առաջ:

Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Օֆելյա ԳԱՍՊԱՐՅԱՆ

Սնահավատությունը՝ հոգևոր վտանգ, և աղոթքը՝ ճշմարիտ ճանապարհ

➥ էջ 6

Ամենօրյա կյանքում հանդիպող սնահավատություններից է, օրինակ, տարբեր թվերի, գույների, օրերի կամ առօրյա իրադարձությունների նկատմամբ յուրահատուկ վերաբերմունքը: Օրինակ՝ որոշ մարդիկ խուսափում են ճանապարհորդել կամ նոր գործ սկսել «չար բախտ» գուշակող օրերին, չեն անցնում սանդուղքի տակից, չեն նստում սեղանի անկյունում կամ հավատում են, որ եթե հայելի կոտրվի, դժբախտություն կլինի: Ստորև ներկայացնում ենք մեզանում տարածված որոշ սնահավատ երևույթներ, որոնց չպետք է լուրջ վերաբերվել.

- աղ թափելը՝ կռիվ ընտանիքում,
- սեղանի անկյունում նստելը՝ յոթ տարի չամուսնանալ,
- գդալ, դանակ-պատառաքաղ կամ հացի կտոր ընկնելը՝ այդ տուն հյուր գալը,
- ձիու պայտ տան մուտքին՝ երջանկության համար,
- փշեր, աչքի ուլունքներ՝ չար աչքից խուսափելու կամ չկամեցողների վատ ցանկությունները չիրականանալու համար,
- թալիսմաններ՝ հաջողության համար,
- ընկնող աստղ՝ աստղի անկման ընթացքում պահված երազանքի իրականացում,
- ձեռքի կամ ոտքի ափը քոր գալ՝ փող ստանալու հնարավորություն:

Թեպետ նման սովորությունները կարող են թվալ անմեղ կամ նույնիսկ մշակութային ժառանգության մաս, սակայն դրանք իրականում խաթարում են հոգևոր հավասարակշռությունը՝ մարդուն ներշնչելով անհիմն վախ և անվստահություն:

Լևոն III թագավորը և Կեռան թագուհին՝ զավակների հետ. վերևում՝ «Բարեխոսություն»: Երուսաղեմ, ձեռ. 2563, էջ 280ա, Կեռան թագուհու Ավետարան, 1272 թ.

Սնահավատությունն ավելի շատ սխալ մտածելակերպ է, ժողովրդական անճիշտ մեկնաբանություն, թյուրըմբռնում, քան հոգևոր արժեքների միտումնավոր խեղաթյուրում, չնայած որոշ գուշակներ և կախարդներ, չարից դրդված, կարող են քրիստոնյա հավատացյալ մարդուն շեղել իր ճշմարիտ ուղուց: Գոյություն ունի նաև անհատական սնահավատություն, որ մարդը կարող է սահմանել իր համար:

Սոցիալական մեդիան և գովազդը նշանակալի դեր ունեն սնահավատության ժամանակակից ձևերի տարածման մեջ: Տարբեր հարթակներում հաճախ ներկայացվում են «հաջողության թալիսմաններ», «հորոսկոպներ», «էներգետիկ քարեր» կամ «լավ աուրայի» մեթոդներ՝ որպես ինքնազարգացման կամ դրական կյանքի խորհրդանիշներ: Թեև այս երևույթներն առաջին հայացքից անվնաս են թվում, խորքում ունեն նույն գաղափարական հիմքը՝ հավատ արտաքին ուժերի և նշանների զորությանը: Դրանք փորձում են փոխարինել հավատքը Աստծո նկատմամբ՝ առաջարկելով «հեշտ ճանապարհ» դեպի երջանկություն, հաջողություն կամ անվտանգություն:

Հոգեբանորեն սնահավատությունը հաճախ ծագում է անվստահությունից և վերահսկողության կարիքից: Երբ մարդը բախվում է անորոշության կամ վախի, նա փորձում է գտնել հոգեբանական հենակետ: Քրիստոնեական ավանդույթում սնահավատությունից ազատվելը չի դիտվում պարզապես վատ սովորությունից հրաժարում, այլ հոգևոր վերածնունդ և հավատքի խորացում: Այն պահանջում է մարդու ներքին գիտակցական փոփոխություն՝ հույսը և վստահությունն ամբողջությամբ Աստծո վրա դնելու միջոցով: Այս ճանապարհն ընդգրկում է հիմնական քայլեր, որոնք օգնում են հավատացյալին՝ վերադառնալու ճշմարիտ հավատքի արմատներին: Դրանք են՝

1. Աղոթք: Աղոթքը քրիստոնյայի համար ոչ միայն խոսք է Աստծո հետ, այլև հոգևոր հաղորդակցություն, որը վերականգնում է վստահությունը և խաղաղությունը: Աղոթքի միջոցով մարդը սովորում է ապրել հավատով, ոչ թե վախով, ինչը հենց սնահավատության հակառակն է: Երբ հավատացյալն իր մտահոգությունները հանձնում է Աստծուն, ոչ թե պատահական նշանների կամ առարկաների, նա ազատվում է ներքին լարվածությունից և անորոշությունից: Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է. «Աղոթքը հոգու կենդանության նշանն է, ուստի և պետք է միշտ եռանդուն լինել աղոթելու մեջ, իսկ եթե աղոթքը դադարում է, նշանակում է՝ մեռած է հոգին»: Իսկ Խոսրով Անձևացին հետևյալն է նշում. «Աղոթքը պարծանքների պսակ է, փրկության պատճառ, բարիքների առիթ, համբերության պարզիչ, աստվածպաշտության ծանոթություն, Սուրբ Հոգուն հրավիրող»:

2. Սուրբ Գրքի ընթերցում: Աստվածաշունչը հավատացյալի համար մնում է գլխավոր ուղեցույցը՝ օգնելով տարբերել ճշմարիտ հավատքը կեղծ համոզումներից: Կանոնավոր ընթերցումը և խորհումը Սուրբ Գրքի խոսքերի շուրջ ամրացնում են մարդու հավատքը՝ թույլ չտալով, որ սնահավատ մտքերը տեղ գտնեն նրա հոգում:

3. Հոգևոր խորհրդատվություն և համայնքային կյանք: Քահանան կամ հավատավոր ընկերները կարող են օգնել մարդուն՝ գիտակցելու այն սահմանը, որտեղ սովորույթը վերածվում է սնահավատության: Հոգևոր հովվի խնամքի ներքո գտնվող անձը հնարավորություն է ձեռք բերում՝ ընթանալու ճիշտ ճանապարհով: Կիրակնօրյա Պատարագներին և աստվածապաշտական այլ արարողություններին մասնակցելիս մարդը հաղորդվում է աստվածային ճշմարտությունների ու խորհուրդների հետ, և այլևս այն սնահավատությունները, որոնք թվում են «ճշմարտություններ», ի չիք են դառնում Տիրոջ իմաստությամբ և Սուրբ Հաղորդությամբ:

Սնահավատությունը կարող է թուլացնել մարդու հոգին, սահմանափակել նրա ազատությունը և խանգարել իրական հավատքի զարգացմանը: Սակայն քրիստոնեական հավատը հնարավորություն է տալիս՝ ազատվելու սնահավատությունից՝ վստահելով Աստծուն, աղոթելով ու հետևելով աստվածային պատվիրաններին: Հավատացյալը, որ ապրում է այս վերոհիշյալ սկզբունքներով, գտնում է հոգևոր խաղաղություն, խելամիտ մտածողություն և հաստատուն վստահություն, որ կարևոր են մարդու կյանքում:

Այսպիսով՝ սնահավատությունը միշտ եղել է մարդկության հետ, բայց քրիստոնեական արժեքները մեզ սովորեցրել են ապրել ազատ, վստահ և հոգեպես կայուն՝ առանց վախերի ու անհիմն մտահոգությունների: Քրիստոնեական համատեքստում սնահավատությունը դիտվում է որպես հոգևոր թուլության նշան, քանի որ այն հեռացնում է հավատացյալին Աստծուց և խոչընդոտում իրական վստահության և հոգևոր կայունության զարգացմանը:

Սիրանուշ ԱԴՅԱՆ

Խրիմյան Հայրիկի կերպարը գրականության մեջ և արվեստում

➥ էջ 6

Շատ էր սիրում նաև Խորենացու Ողբը, որի համար հատուկ եղանակ էր ստեղծել, հաճախ երգում էր՝ այն համարելով հայ ժողովրդի ճակատագրի ու բոլոր դարերի ողբը: Նա անգիր արտասանում էր Նարեկացու աղոթքներից, պատմում Նարեկավանքի սուրբ ճգնակյացի տեսիլքների և ժողովրդի մեջ տարածված ավանդությունների մասին, մեծ ոգևորությամբ նկարագրում Նարեկավանքի ու Վանա լճի գեղեցկությունը՝ խոսքն ավարտելով հետևյալ մտքով. «Նարեկացու կույս հոգին միայն կրցավ հասկանալ Քրիստոսին և տվեց քրիստոնեության բանաստեղծությունը»:

Իսահակյանը հիշում է ամեն մի դրվագ ու մանրապատկեր և ամենից շատ՝ Հայրիկի զվարթադեմ խոսքը՝ փոքրիկ գավաթով սուրճի և ծխախոտի ուղեկցությամբ, որ միշտ հետաքրքրական էր ու գեղեցիկ՝ թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ. «Որքան նրա հիշողությունը թարմ էր, նույնքան էլ նա թռիչքներով էր խոսում, մեկ պատմում էր Սուլթան Համիդի մասին, մեկ՝ Մուշի մի գյուղի մասին, մեկ նկարագրում էր բանաստեղծական գույներով մի լեռ Վասպուրականում, մեկ խոսում էր Լոնդոնի մուզեյների կամ Փարիզի մասին.... Իր բազմաբովանդակ և նշանակալից անցյալից, ինչպես մի առասպելական հարուստ գանձարանից, հանում էր թանկագին գոհարներ – հուշեր և այդ հուշերով ոգևորվում էր, թարմանում և առույգանում: Նա ապրում էր իր անցյալով: Այդ հուշերը մեր ժողովրդի 19-րդ դարի ամբողջ պատմությունն էին, մի շքեղ Ոդիսական, որի ստեղծողն ու շատ անցքերի ականատեսը, բռնած քեզ հայրական ձեռքով, տանում է Հայաստանի խորշերը, վանքերն ու ավերակները և եվրոպական պալատներն ու վեհաժողովները: Հսկայական կալեյդոսկոպի մեջ դու տեսնում ես Մասիս ու Մոնբլան, Բզնունյաց ծով և Բոսֆոր, հայ աշխատավոր գեղջուկին և ավազակ քուրդ բեկին, հայ գործիչներին՝ Գրիգոր Օտյանին ու Ռաֆֆիին և վայրագ փաշաներին, Սուլթանին ու Բիսմարկին և այլն, և այլն:

Զարմանում էի նրա հրաշալի հիշողության վրա, մանրամասն և գեղարվեստորեն նկարագրում էր բնության զանազան տեսարանները և այցելած քաղաքներն ու շքեղ շենքերը: Հիշում էր, օրինակի համար, 40-ական թվականների մարդկանց խոսքերը և անցքերի օրերը նույնիսկ, կարծես, ոչինչ չէր մոռացել:

Երբ դուրս եկա Վեհարանից, մտածում էի ինքս իմ մեջ – մեծ մարդիկ չեն ծերանում»:

Հայոց Հայրիկը շատ հետաքրքրասեր էր, միշտ ծանոթ էր գիտական, գրական ու քաղաքական նորություններին: Հանդիպումներից մեկի ընթացքում նա խոսք է բացում գերմանացի գիտնական Հեկկելի մասին՝ ասելով, որ Հեկկելը նոր ու համոզիչ փաստերով հիմնավորում է դարվինական տեսությունը և կարծում, թե Աստվածաշնչի պատմությունը մարդու մասին առասպել է, իսկ իրականում մարդն ունի կենդանական ծագում: Հայրիկը նշում է, որ ինքը նույնպես մասամբ համաձայն է այդ մտքին, քանի որ մարդու մեջ անասնական շատ գծեր կան. «Քրիստոս ատոր հետ կռվելու էր եկել, ան կուզեր մարդուն, որ անասունի որդի է, Աստծու որդի դարձնել: Ճիշտ է Հիսուս, ատոր պիտի ձգտենք մենք՝ Աստծուն որդեգրվել»:

Իսահակյանը գոհունակությամբ արձանագրում է, որ Հայրիկի իմաստուն զրույցները, սրամիտ խոսքերն ու հուշերը մեծ գրական նյութ կարող էին դառնալ, ինքը միայն մի փոքր մասն է պատմում, և որ Հայրիկը միշտ սիրով էր ընդունում իրեն՝ բացառությամբ կարճառոտ մի դրվագի: 1904 թվականին՝ մեկ ամսվա ընթացքում, Իսահակյանն ու Խրիմյանը մի քանի անգամ իրար հանդիպել էին տարբեր վայրերում՝ Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Էջմիածնում և Խոր Վիրապի վանքում: Վերջին հանդիպման ժամանակ, երբ Հայրիկը Իսահակյանին տեսնում է, զայրացած ասում է. «—Ծո՛ր, դուն կիետևես ինձ ամեն տեղ, սատանա, հայդե, կորի, գնա մոտես...

Ես իսկույն փախա, բայց երեկոյան կանչեց ինձ մոտը և սիրտս առավ:

—Տղաս, այսօր սիրտս ելած էր ուրիշ բանի մը առթիվ, բարկությունս քու վրադ թափեցի, քանզի գիտեմ, որ դուն Հայրիկին կսիրես ու անորեն չես նեղանար, ուրիշներու վրա չեմ կրնա բարկանալ. քեզ կսիրեմ, ատոր համար վստահ կբարկանամ վրադ: Հետո ծիծաղելով վրա բերեց.

—Ինչ շատ ման կուգաս Վանա ջրտորտող թռչունների պես: Երանի քեզ, երիտասարդ ես, չես հոգնի, լավ կանես, շրջի՛ր, գնա՛, մա՛ն եկ ժողովրդի մեջ, ինչ կա, չկա, ան է, ան տեղ է, հողին հետ. մեծ է ժողովուրդ ասածդ, մեծ սիրտ ունի, անոր հետ եղիր միշտ, և քու սիրտն ալ կմեծանա»:

Իսահակյանը Հայոց Հայրիկին վերջին անգամ այցելում է 1906 թ. աշնանը, երբ Խրիմյան Հայրիկը վատառողջ էր, թույլ և գունատ: Բանաստեղծը ցավով է հիշում այդ պահը. «Տխուր նախազգացումով պաշարված, ուշի-ուշով դիտում էի նրա արծվենի հայացքը, ուր դեռ արև կար, հոգեթով ձայնը և հնադարյան մագաղաթի նման դեղին աջը:

Զգում էի, որ վերջին անգամ եմ տեսնում նրան՝ հայ ժողովրդյան այդ մեծ զավակին: Մի երկար ու խորին համբույրով նրա աջն առա և հեռացա մռայլ ու տխուր:

Ես հավատացած եմ, որ մինչև մահս իմ հոգում անջինջ և անաղարտ կմնա նա՝ այդ մեծ հայրենասերը:

Երբեք չեմ կարող մոռանալ նրա հայացքը, նրա նվիրական ձայնը: Այնպես խորն է ազդել իմ հոգու վրա:

Եվ հայ ժողովուրդն էլ չի մոռանա նրան: Քանի հնանա, այնքան ավելի պիտի պայծառանա նրա հիշատակը: Նա դարերի միջից պիտի նայե հայ ժողովրդին և պիտի խոսի նրա հետ հարազատ լեզվով նրա նվիրական իղձերից և անմահ նպատակներից:

Ժողովուրդը նրան չի մոռանա երբեք, որովհետև նրա սրտից էր եկել և դեպի նրա սիրտն էր գնում»:

Ավելացնենք, որ Վարպետը «Խրիմյան Հայրիկ» հուշապատումը գրել է 1945 թ., առաջին անգամ հրատարակվել է 1946 թ. Երևանում՝ «Իմ հուշերից» գրքում:

Շարունակելի

Արման ՄԱԼՈՅԱՆ, պ. գ. թ.

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 14.01.2026 թ.
Տպաքանակը՝ 1265